Ազգ
Azg
13 ՓԵՏՐՈՒԱՐ 2013 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 17(5100)
ISSN: 1829-1651

# «1915-ի 100-րդ տարելիցին ցեղասպանության հարցը նորից կմտնի օրակարգ եւ կհանգեցնի այլ արդյունքի»

*Թուրքերին նախազգուշացրել է ֆրանսիացի սենատորը, որքան էլ իրեն համարի Թուրքիայի բարեկամը*

Փետրվարի 11-ին ընդդիմադիր Միասնություն հանուն ժողովրդական շարժման կուսակցության` UMP-ի 5 պատգամավորներ Ֆրանսիայի Ազգային ժողովի քարտուղարություն են ներկայացրել ցեղասպանությունների, այդ թվում նաեւ Հայոց ցեղասպանության, ուրացումը քրեականացնող նոր օրինագիծը: Այս օրինագծի հեղինակը, ինչպես եւ անցյալ տարվա փետրվարի 28-ին Սահմանադրական խորհրդում մերժվածն էր, Վալերի Բուայեն է:

Օրինագիծը ցեղասպանության ուրացման համար 2 տարի ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք է նախատեսում, միաժամանակ «Հայոց ցեղասպանություն» արտահայտության օգտագործումը արգելում է «այսպես կոչված», «ենթադրյալ», «պնդում» եւ «կեղծ» բառերի ուղեկցությամբ: Քարտուղարությունը Ազգային ժողովի Սահմանադրական հանձնաժողով է փոխանցել ժխտողականությունը քրեականացնող նոր օրինագիծը:

Դա ե՞րբ կդրվի քննարկման, չգիտենք: Պարզապես հայտնի է, որ նախորդ օրինագծի համար Վալերի Բուայեն էլեկտրոնային փոստով ամենաայլանդակ, փողոցային հայհոյանքներ էր ստացել, եւ հայհոյանքների թուրք հեղինակները, այդ թվում` ֆրանսաբնակ, սպառնացել էին Ֆրանսիայի ազգային ժողովի կին պատգամավորին, թե սպանելու են նրա երեխաներին:

Ի դեպ, տիկին Բուայեին հասցեագրված հայհոյանքների ու սպառնալիքների մասին ժամանակին գրել էր Անկարայի համալսարանի քաղաքական գիտելիքների ամբիոնի պրոֆ. Բասքըն Օրանը: Թուրքիան դեռ հրապարակավ չի արձագանքել նոր օրինագծին, ոչ էլ թուրք հրոսակն է հակազդում: Ըստ երեւույթին սրանք արձագանքի կամ հակազդեցության համար սպասում են քննարկումների ընթացքին:

Սակայն սպասողական վիճակը չի խանգարել «Ջիհան» լրատվական գործակալությանը, որ օրինագծի առնչությամբ դիմի Ֆրանսիայի Սենատի անդամ Նատալի Գուլեին: Օգտվելով առիթից, նշենք, որ Սենատում Ֆրանսիա-Թուրքիա բարեկամության խմբի ղեկավարի տեղակալ տիկին Գուլեն անցյալ տարի Վրաստան այցելության ընթացքում հայտարարել էր. «Ցեղասպանության ուրացումը քրեականացնելու համար մղած պայքարում հայերն այնքան իրավացի են, որքան Հոլոքոստի պարագայում հրեաները»: Թերեւս նա դրանով էլ վշտացրել է թուրքերին:

Այլ կերպ, թուրքական գործակալության ընտրությունը պատահական չէ: Համենայն դեպս, տիկին Գուլեն ասել է, որ ինքը դեմ է պատմական խնդիրների խորհրդարաններում քննարկմանը, ներկա պահին շատ փոքր է համարում նոր օրինագծի մուտքը Ազգային ժողովի օրակարգ, սակայն դա չի ենթադրում ցեղասպանության հարցի վերջնական դուրսմղումը Ֆրանսիայի օրակարգից:

Տես էջ 2

ՌԱԿ

# Մտավորականությունն ասելիք ունի, իշխանությունը` լսելիք

*Երկուսն էլ անելիք ունեն*

Հ. ԱՓՅԱՆ



Եթե դիտարկենք, որ քաղաքական գործիչն ու մտավորականը ամեն ինչից բացի նաեւ խնդիրներ լուծողներ են, ապա քաղաքական գործչի պարագայում այդ խնդիրներն ավելի շատ ժամանակային կլինեն, իսկ մտավորականը ոչ միայն ժամանակի, այլեւ ապագայի խնդիրները լուծողն է: Հենց այս պատճառով էլ ե՛ւ ժամանակին, ե՛ւ ապագայում խնդիրներ հնարավորինս քիչ ունենալու համար (առհասարակ խնդիրներ միշտ են լինելու) խիստ կարեւոր են քաղաքական գործիչ-մտավորական գործակցությունը, կապը, առհասարակ քաղաքական դաշտի, հատկապես իշխանության եւ գիտական ոլորտի փոխադարձ հարգանքն ու միմյանց լսելի լինելու ունակությունը:

Հուսանք, որ գալիք հինգ տարիներին մեր երկրում կկայանա այս անհրաժեշտ գործակցությունը, ինչի նպատակով էլ երեկ Թեքեյան կենտրոնում, Ռամկավար ազատական կուսակցության նախաձեռնությամբ տեղի ունեցավ քննարկում «Հայաստանի Հանրապետությունը առաջիկա հինգ տարում» խորագրով: Քննարկմանը հրավիրված էին ՀՀԿ փոխնախագահ, ԱԺ-ում ՀՀԿ խմբակցության ղեկավար Գալուստ Սահակյանը, այլ գործիչներ, մտավորականներ:

Տես էջ 3

# Տրնդեզը կնշվի ամսի 14-ին



**Տյառնընդառաջը կամ, ինչպես ժողովուրդն է ասում, Տրնդեզը կնշվի փետրվարի 14-ին: Տյառնընդառաջի ընթացքում հիշատակվում է, թե ինչպես են 40-օրական Հիսուսին տաճար տանում: Երբ Հովսեփն ու Մարիամը մանուկ Հիսուսին տանում են տաճար, Սիմոն անունով մի մարդ, տեսնելով Հիսուսին, հասկանում է, որ նա փրկություն ու լույս կլինի մարդկանց համար, ուստի ընդառաջ է գնում նրանց: Այստեղից էլ առաջացել է տոնի Տյառնընդառաջ անունը, որը նշանակում է Տիրոջն ընդառաջ:**

**Հայաստանյայց առաքելական եկեղեցին Տյառնընդառաջը կամ 40-օրական Հիսուսի ընծայումը տաճարին տոնում է Աստվածահայտնությունից 40 օր հետո, եւ Տյառնընդառաջի տոնին եկեղեցիներում մատուցվում է պատարագ, իսկ պատարագից հետո Գարեգին Երկրորդ կաթողիկոսի տնօրինությամբ տեղի է ունենում նաեւ նորապսակների օրհնության կարգ:**

**Շատերի մեջ շփոթմունք կա, թե Տրնդեզը նշվում է փետրվարի 13-ին. շփոթմունք առաջացել է այն պատճառով, որ ամսի 13-ի երեկոյան, ըստ եկեղեցու օրացույցի, կատարվում է նախատոնակ, որի ընթացքում սուրբ սեղանի կանթեղից վերցրած լույսը մարդիկ տանում են իրենց տները, իսկ հետո նորապսակները, հետեւելով ժողովրդական ավանդույթին, վառում են խարույկներ ու թռնում դրանց վրայով: Հաջորդ օրը` ամսի 14-ին արդեն նշվում է Տրնդեզը, որը շարժական տոն չէ եւ ամեն տարի նշվում է նույն օրը:**

**Այսօր` ժամը 17.30-ին, Նոր Նորքի Ս. Սարգիս եկեղեցու բակում 250 նորապսակ զույգերի մասնակցությամբ կկատարվի Տյառնընդառաջի ժողովրդական տոնախմբություն: Իսկ ժամը 17-ին եկեղեցում կկատարվի տոնական ժամերգություն:**

Ի. Պ.

# Չինար գյուղում կրակոցներից պայթել է գազասար խողովակը

Արդեն երկու օր Չինար գյուղում անհանգիստ է: Փետրվարի 12-ի գիշերվանից թշնամին կրակահերթի տակ է առել ողջ գյուղը: Որոշ ժամանակ անց գյուղում կրկին կրակոցներ են հնչել: Երեկ ցերեկը` ժամը 3-ի սահմաններում թշնամու կրակոցների հետեւանքով պայթել է գյուղի գազասար խողովակը: Ձեռնարկած միջոցառումներով ժամանակավորապես դադարեցրել են գյուղի գազամատակարարումը, այնուհետեւ մարել բռնկած հրդեհը: Նույն օրը թշնամին կրակել է նաեւ գյուղացիներից մեկի «Ժիգուլի» մակնիշի մեքենայի վրա: Ինչպես «**Ազգ**»-ին հաղորդում են Չինար գյուղից, մեքենայի մեջ եղած գյուղացիները կարողացել են դուրս գալ եւ պատսպարվել թշնամու գնդակներից: Բարեբախտաբար գյուղում զոհեր եւ վիրավորներ չկան, կարճ ժամանակահատվածում վերականգնվել է նաեւ գյուղի գազամատակարարումը:

Հ. Հ.

ՌԱԿ-ԲԵՅՐՈՒԹ

# Հպարտօրէն զօրակցելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին



22 տարիներ առաջ Հայաստանը վճռեց իր ճակատագիրը` ազգային մեր պատմութեան մէջ նոր անկիւնադարձ մը որոշեցրելով, անկախութիւն ձեռք ձգելով: Այսօր Հայաստան հպարտութեամբ իր հայեացքը կը սեւեռէ իր եսին դրոշմուած այն ամէն ինչին զոր իրականացուցած է, շատ յաճախ դժուարագոյն պայմաններու մէջ, վերջին քսան տարիներու ընթացքին: Հայաստան դժուարութեամբ ժողովրդավարութիւն կերտած է, իրականացնելով նաեւ անցումը շուկայական տնտեսութեան ու վերագտած իր տեղը միջազգային բեմահարթակին վրայ:

Հայաստան այդ ամէնը յաջողեցաւ իրականացնել նաեւ շնորհիւ իր ժողովուրդի խիզախութեան եւ աշխատասիրութեան առանձնայատուկ որակներուն, որոնց համար համայն հայութիւնը արժանին կը մատուցէ: Այս բոլոր տարիներու ընթացքին Լիբանան եւ Հայաստան, որոնց կը միացնեն ամուր եւ դարաւոր կապեր, զարգացուցած ու հետեւողականօրէն խորացուցած են արդիւնաւէտ համագործակցութիւն շարք մը բնագաւառներու մէջ: Ահա թէ ինչու, յատկապէս վերջին հնգամեակին, շնորհիւ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի վարած դիւանագիտական մշակոյթին, Հայաստան կը վայելէ ոչ միայն Լիբանանի, այլեւ վստահութիւնն ու բարեկամութիւնը բազմաթիւ յառաջդիմած ու զարգացած երկիրներու, որոնք գործնապէս ալ ցոյց կու տան Հայաստանի կողքին իրենց ըլլալը, աջակցելու անոր` դիմակայելու ծառացած մարտահրաւէրները:

Սփիւռքահայ իրականութեան մէջ եզակի երեւոյթ կարելի է համարել նախաձեռնութիւնը երեկոյթի մը, ուր հոծ բազմութեամբ հայորդիներ ի մի հաւաքուելով իրենց երախտագիտութիւնը յայտնեն այն Հայաստանի նախագահին, որ կեանք մը ամբողջ մատուցած է անձնազոհութիւն` յանուն հող հայրենիին, նուիրում` ի սպաս ազգի ծառայութեան եւ հաւատք` իր ի գործ դրած այն մեծ ճիգերուն` յաղթահարելու համար արտաքին աշխարհի հրամցուցած բոլոր մարտահրաւէրները:

Տես էջ 4

# Նոր նշանակումներ

Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի տնօրինությամբ կատարվել են Մայր աթոռ Ս. Էջմիածնի միաբանների նոր նշանակումներ:

Կոտայքի թեմի առաջնորդ Առաքել եպիսկոպոս Քարամյանն առաջնորդական իր ծառայությանը համատեղ ստանձնել է ՀՀ ոստիկանության հոգեւոր պատասխանատուի պաշտոնը:

Նարեկ աբեղա Ավագյանը եւ Հմայակ աբեղա Սահակյանը ծառայության են կոչվել Մայր աթոռում: Արիս աբեղա Տոնոյանը նշանակվել է Խոր Վիրապի վանահայր:

Կիրակոս աբեղա Դավթյանը ծառայության է կոչվել Բելառուսի հայոց համայնքում` Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդի իշխանության ներքո, իսկ Սամվել աբեղա Մխիթարյանը` Տավուշի թեմում:

Պարթեւ աբեղա Բարսեղյանը, վերադառնալով Ֆրանսիայի հայոց թեմում հոգեւոր ծառայությունից, նշանակվել է Մայր աթոռի փոխդիվանապետ:

# Պարույր Հայրիկյան. «Վահան Հովհաննիսյանը խանդում է, որ իր վրա չեն կրակել»

«Հայրիկյանը կողմ է երկրում կայուն իրավիճակին»: Վերջին երկու շաբաթվա հանրապետության թիվ մեկ newsmaker Պարույր Հայրիկյանը երեկ հենց այսպիսի հայտարարությամբ սկսեց իր ասուլիսն ու կարծես թե վերջակետ դրեց իր շուրջը ծավալվող գործընթացներին: Ասուլիսում Հայրիկյանը չզլացավ եւ պատասխան տվեց բոլոր այն քաղաքական գործիչներին, ովքեր բացասական տոնայնով էին անդրադարձել իրեն: «Որքան էլ ես լավատեսորեն եմ տրամադրված, բայց քարոզարշավից դուրս մղվեցի, չնայած չեմ ուզում դա ողբերգության վերածել», ասաց Հայրիկյանը` արդարացված համարելով Սահմանադրական դատարան դիմելու հետ կապված բոլոր խոսակցությունները: Հայրիկյանը խոստովանում է, որ ունի մեղքի բաժին, քանի որ հանգամանորեն չի բացատրել:

«Ես ասել էի, որ դիմելու եմ` չբացառելով, որ կարող եմ հետ վերցնել: Նախապատվություն տվեցի կայուն իրավիճակին»: ԱԻՄ առաջնորդը հավաստիացնում է, որ անհայտ ուժերը ցանկանում են բնականոն ընթացքը խախտել, բայց ինքը կարողացավ ճիշտ պահին ճիշտ որոշում կայացնել: Հայրիկյանի խոսքերով` մեկ այլ հանգամանք էլ գոյություն ունի: Եթե նա հետաձգեր ընտրությունները, ապա դրանով զոհասեղանին կդներ Անդրիաս Ղուկասյանի կյանքը:

«Բագրատյանն էլ ասում է` դու պարտավոր ես դիմել, դու չդիմես Սահմանադրական դատարան, ես կդիմեմ, մինչեւ ժամը 12-ը: Ես էլ ասացի` շատ ես ուզում` դու դիմի: Բանուգործ չունես, Հրանտ, եթե դու ընդդիմադիր ես, քո միակ խնդիրն իշխանության դեմ պայքարելն է»: Հայրիկյանն առաջարկեց` իրեն չստիպել խոսել Բագրատյանի մասին, քանի որ նա իր թիմակիցներին դավաճանել է, Լեւոն Տեր-Պետրոսյանին չի էլ հարգել, թե ի՞նչ կարծիքի է իր թեկնածությունը դնելու մասին: Նա վստահ է, որ միասնական թեկնածուի գաղափարն իրականություն չդարձավ, որովհետեւ մյուս թեկնածուները խանդից ու բարդույթից վրդովված իր հրապարակային առաջարկն անվանեցին գաղտնիքների բացահայտում: Ինքը` Հայրիկյանը շատ բան ունի ասելու, նրան վրդովեցրել է փաստը, որ հիվանդանոց են այցելել ու կրծքից վիրավորված թեկնածուին ասել, որ դեռ պետք է պարզեն` դա մահափորձ է, թե` ոչ: Հայրիկյանի համար աբսուրդ է նման հարցի քննարկումն ու բարձրաձայնումն ընդհանրապես: Թեպետ թեկնածուն դուրս է գրվել հիվանդանոցից, սակայն լիարժեք չի ապաքինվել: Հենց դա է պատճառը, որ քարոզարշավ չի կազմակերպի եւ մարզերում հանդիպումներ չի ունենա: Սակայն կօգտագործի համացանցն ու եթերաժամանակը: Թեպետ ընտրություններին մնացել է մի քանի օր, Հայրիկյանը հույսը չի կորցնում, որ դեռ կա ժամանակ իրավիճակը փոխելու:

Հայրիկյանն ասաց, որ էպոսագետ Վարդան Սեդրակյանին չի էլ ուզում նկատել կամ նրան ինչ-որ բան ասել: Հիշեցնենք, Սեդրակյանն ասել էր, որ իր մեքենան Հայրիկյանի կյանքից թանկ է: ԱԻՄ առաջնորդը հիշեց նաեւ ՀՅԴ բյուրոյի անդամ Վահան Հովհաննիսյանի հայտարարությունը. «Արա՛, դուք ո՞վ եք, որ ձեր վրա կրակեն»: «Վահան Հովհաննիսյանը խանդում է, որ իր վրա չեն կրակել», ասաց Հայրիկյանը` հավաստիացնելով, որ կրակոցն իր վարկանիշը ոչ թե բարձրացրեց, այլ իջեցրեց:

Մեր խորին համոզմամբ` Հայրիկյանի վարկանիշն ընկավ ոչ թե կրակոցի պատճառով, այլ իր անորոշ կեցվածքի, վիրահատարանից դեպի մամուլի սրահ վազելու, չկողմնորոշվելու եւ անլուրջ քաղաքական գործչի տպավորություն թողնելու հետեւանքով:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՄԲ

# Հեռուստամարաթոն Լոս Անջելեսում` հաջակցություն գյումրեցի տնակաբնակների

**Փետրվարի 10-ին ԱՄՆ-ի Լոս Անջելես հայաշատ քաղաքում անցկացվել է 1988-ի դեկտեմբերյան աղետի 25-ամյակին նվիրված դրամահավաք-հեռուստամարաթոն` հաջակցություն Գյումրու վագոնտնակներում բնակվող ընտանիքների:**

**Ըստ այս մասին «Շիրակ կենտրոնի» տարածած հաղորդագրության, մարաթոնն ընթացել է Լոս Անջելեսի ժամանակով ժամը 11-ից մինչեւ երեկոյան 10 եւ հեռարձակվել AMGA հեռուստակայանի երեք ալիքների ուղիղ եթերով: Մարաթոնը կազմակերպել են այս հեռուստաընկերությունը, արդեն շուրջ մեկ տարի Գյումրու տնակաբնակներին աջակցող բարերար Էլվիս Մադաթյանը, «Համայնապատկեր» հայկական հանդեսի գլխավոր խմբագիր Սարո Գյոդակյանը եւ հեռուստալրագրողներ Արմեն Բարսեղյանն ու Ռուդիկ Հովսեփյանը, դրան ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գլենդելում բնակվող հայ համայնքի ավելի քան 700 անդամներ: Մարաթոնի ընթացքում հանգանակվել է մոտ 40 հազար դոլար, սակայն նախաձեռնողների հավաստիացումներով` գյումրեցի տնակաբնակների օգտին դրամահավաքը կրելու է երկարաժամկետ բնույթ եւ տեւելու է մինչեւ դեկտեմբերի 7-ը:**

**Ինչպես հեռուստամարաթոնի ընթացքում հանգանակված, այնպես էլ հետագայում հավաքվելիք գումարը «Շիրակ կենտրոնի» միջոցով ծախսվելու է Գյումրու տնակային ավաններում բնակվող ընտանիքների առաջնային խնդիրների լուծման նպատակով: Այդ խնդիրները պարբերաբար ներկայացվում են կենտրոնի աշխատակիցների պատրաստած տեսանյութերում: Դրանցում ներկայացված ընտանիքներին կշարունակի հասկացվել նաեւ տարբեր անհատների կողմից տրամադրվող տարատեսակ նյութական օգնությունը:**

**«Շիրակ կենտրոնը» գյումրեցի հարյուրավոր անօթեւան եւ սոցիալապես ծանր պայմաններում ապրող ընտանիքների անունից իր խորին երախտագիտությունն է հայտնել լոսանջելեսյան հեռուստամարաթոնի եւ դրամահավաքի կազմակերպիչներին:**

Գ. Ս.

# Սյունիքի արոտավայրերը Իրանի ոչխարապահներին հանձնելու մասին



**«Հայազն» կուսակցությունը նամակ է հանձնել Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպան Մոհամմադ Ռեիսիին, որտեղ մտահոգություն է հայտնվում Սյունիքի մարզի մոտ 50 հազար հա արոտավայրերը Իրանի Արեւմտյան Ադրպատականի ոչխարապահներին երկարատեւ վարձակալությամբ տրամադրելու գործարքի վերաբերյալ: Նամակում նշվում է, որ այս գործարքի իրագործումը կարող է բացասաբար ազդել «երկու բարեկամ պետությունների հարաբերությունների վրա»:**

**Մամուլի ասուլիսի ժամանակ Հայաստանում Իրանի դեսպան Մոհամմադ Ռեիսին հավաստիացրել է, որ Սյունիքի մարզի արոտավայրերը Իրանի Արեւելյան Ադրպատականի նահանգին վարձակալության հանձնելու պայմանագիր ստորագրված չէ: Նա միաժամանակ հավանական է համարել, որ նման առաջարկ իրանական կողմից արված կարող է լինել, ավելացնելով, որ այդ առաջարկը բխում է ինչպես Իրանի, այնպես էլ Հայաստանի շահերից, քանի որ Հայաստանում կավելանա անասնագլխաքանակը:**

Ա. Մ.

# Սոցիալական նոր ծրագիր. Գիշերօթիկների երեխաները կդառնան սկաուտներ

Հայաստանի ազգային սկաուտական շարժում «Հասկ» ՀԿ-ի կենտրոնական գրասենյակում ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը, ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արտեմ Ասատրյանը եւ Հայաստանի ազգային սկաուտական շարժման ատենապետ Հրաչյա Շմավոնյանը ստորագրել են փոխադարձ համագործակցության եռակողմ հուշագիր:

Հուշագրի նպատակը սոցիալապես անապահով ընտանիքների եւ կյանքի դժվարին պայմաններում հայտնված երեխաների ներգրավվածության ապահովումն է սկաուտական շարժմանը` որպես արտադպրոցական կրթության կարեւոր բաղադրիչ:

Կարեւորելով նախաձեռնությունը` ՀՀ կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանը** շնորհակալություն է հայտնել Հայաստանի ազգային սկաուտական շարժմանը եւ նշել, որ մեկնարկող «Անապահով երեխաների կազմակերպական զարգացում եւ ներգրավվածություն» ծրագիրն ունի երկու կարեւոր բաղադրիչ` սոցիալական եւ դաստիարակչական: «Աշակերտների ռազմահայրենասիրական եւ արտադպրոցական դաստիարակության կազմակերպումը կրթական համակարգի կարեւոր խնդիրներից է: Նման ծրագրերում հանրային սեկտորի եւ հասարակական եւ ռազմահայրենասիրական կազմակերպությունների ներգրավվածությունն արդյունավետ եւ արդարացված է: Խիստ կարեւոր է նաեւ ծրագրի սոցիալական բաղադրիչը»,- շեշտել է նախարարը եւ հավելել, որ ծրագիրը համաստեղելի է ՀՀ ԿԳՆ եւ ՀՀ աշխատանքի եւ սոցիական ապահովության նախարարությունների համագործակցության գերակայություններին եւ նպատակներին: Նախարարը նաեւ տեղեկացրել է, որ ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը «Բլոգնյուզ» կայքի հետ համատեղ նոր ծրագիր է սկսել, որը նպատակ ունի բացահայտել սոցիալական խնդիրների պատճառով դպրոցներից դուրս մնացած երեխաներին եւ, գնահատելով նրանց կարիքները, նպաստել խնդիրների լուծմանը: «Ոչ մի երեխա սոցիալական պատճառներով պետք է դուրս չմնա դպրոցից, դա մեր գերակա նպատակն է»,- հայտարարել է Ա. Աշոտյանը:

Համատեղ «Անապահով երեխաների կազմակերպական զարգացում եւ ներգրավվածություն» ծրագրի իրագործումը կիրականացվի «Խաղաղության սուրհանդակներ» առաքելության շրջանակում: Ծրագրի ընդհանուր արժեքը մոտ 18 մլն դրամ է, որը դրամաշնորհային կարգով «Հասկին» տրամադրել է Համաշխարհային սկաուտական շարժման Messengers of Peace հիմնադրամը: Ծրագրում, որը նախատեսվում է իրականացնել 7 մարզերում մինչեւ 2014 թվականը, կներգրավվեն գիշերային խնամքի կենտրոններում եւ հարակից բնակավայրերում ապրող 12-18 տարեկան մոտ 1400 սոցիալապես անապահով երեխաներ:

Ս. Հ.

# «1915-ի 100-րդ տարելիցին ցեղասպանության հարցը նորից կմտնի օրակարգ եւ կհանգեցնի այլ արդյունքի»

*1-ին էջից*

Տիկին սենատորը միաժամանակ զգուշացրել է, որ 1915-ի 100-ամյա տարելիցին Հայոց ցեղասպանության խնդիրը նորից օրակարգ կմտնի Ֆրանսիայում եւ 2015-ին հայկական սփյուռքի նախաձեռնությունն արդեն բոլորովին այլ արդյունքի կհանգեցնի, քան նախորդ նախաձեռնությունները: Ավելին, նա մատնանշել է, որ վերջին շրջանում նկատելի աշխուժացող ֆրանկո-թուրքական հարաբերությունների կարեւորագույն խոչընդոտը Հայկական հարցն է, իսկ հայերը չափազանց ազդեցիկ են Ֆրանսիայում:

Թեեւ սենատոր Գուլեն հավաստիացրել է «Ջիհան» գործակալությանը, թե ինքը շարունակում է լինել Թուրքիայի ու Ադրբեջանի բարեկամը, թուրքերին վշտացնող անցյալ տարվա հայտարարությունը սխալ են հասկացել, նույնիսկ արտահայտվել է Խոջալուի «կոտորածի», այսպես կոչված, ադրբեջանական տարածքի «հայկական օկուպացիայի» մասին, բայց եւ այնպես ընդգծել է. «Հայոց ցեղասպանության հարցի առնչությամբ անցյալ տարի ցուցաբերածս դիրքորոշումը մնում է անփոփոխ»:

Այսինքն, «հայերը ցեղասպանության հարցում այնքան իրավացի են, որքան Հոլոքոսթի պարագայում հրեաները»: Արտատպելով «Ջիհան» գործակալության հաղորդագրությունը երեկվա համարում, Նյու Յորքի «Թուրքական» կայքէջը զերծ է մնում մեկնաբանությունից: Ըստ երեւույթին, սենատոր Նատալի Գուլեի խոսքերը տեղ են հասել, բայց չպետք է հասանելի լինեն դեռեւս 21-րդ դարում հայասյացության անասնական բնազդով տառապելու պատճառով առ այսօր բռնությունը պաշտող, մարդասպանով հիացող թուրքական զանգվածներին: Այլապես թուրքական պետությունն այս զանգվածներին չի կարող իբրեւ հայհոյանքի եւ սպառնալիքի միջոց օգտագործել ինչպես ֆրանսիացի սենատորների, այնպես էլ Վալերի Բուայեի նման պատգամավորների դեմ:

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն***
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը` «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

## Անցուդարձ

# Թուրքիայում հայությունը մտահոգ է, Թուրքիան ինքը՝ անհանգիստ

Ստամբուլի Սամաթիա շրջանի հայության մասին խոսելիս թերեւս ճիշտ կլինի ասել՝ Պոլսի Սամաթիա շրջանի հայեր, որոնք այս օրերին բավականին լարված, մտահոգ իրավիճակում են: «**Ազգը**» նախորդ համարներում անդրադարձել է, որ Սամաթիայում բնակվող ազգությամբ հայ երկու կին սպանվել են, պատճառը՝ ավազակային, էթնիկ հողի վրա կատարված հարձակումն էր...

Երեկ Երեւանում, հանդիպելով լրագրողներին, ՀՅԴ Հայ դատի գրասենյակի ղեկավար **Կիրո Մանոյանը** տեղեկացրեց, որ Սամաթիայում հայությունը բավականին մտահոգ է, անգամ հայերի տների վրա խաչեր են նշմարվում, ինչպես Ցեղասպանությանը նախորդող ժամանակահատվածում, եւ Ցեղասպանությունն իրագործելուն նախապատրաստվելիս. «Կիրակնօրյա պատարագներից հետո պատարագիչ քահանան հորդորում է՝ ծերերին ճանապարհել մինչեւ տները», ասաց Մանոյանը:

Անցյալ դարի սկզբներից եկած ու 21-րդ դարում դեռեւս պահպանված այս մտահոգությունները նույնականացվում են, քանի որ, ինչպես գրեթե հարյուր տարի առաջ, այնպես էլ այսօր Թուրքիայի ղեկավարության կողմից որեւէ դատապարտող հայտարարություն մինչեւ օրս չի հնչել: Հավանաբար թուրք իշխանությունները զգուշանում են որեւէ հայտարարություն անելուց, քանի որ եթե ազգությամբ հայերի դեմ իրագործված հարձակումները նրանք դատապարտեն, ապա դրանով իսկ կընդունեն, որ այդ հարձակումները հենց ազգությամբ հայերի դեմ են իրագործվել վերջիններիս միայն հայ լինելու պատճառով, իսկ սա արդեն ոչ միայն ապացուցում է հարյուր տարի առաջ իրագործված Ցեղասպանությունը, այլեւ ցույց տալիս, որ Թուրքիայում այսօր էլ նկատելի են ցեղասպանության, էթնիկ հողի վրա հանցագործության հիմքեր ու օրինակներ: Մյուս կողմից, թուրքական պետությունն ինքը իր քաղաքականությամբ նպաստում է երկրում հայատյացության տարածմանը, օրինակ՝ Հրանտ Դինքին չարաբաստիկ 301-րդ հոդվածով դատապարտած դատավոր Մեհմեդ Նիհաթ Օմերօղլուն թուրքական Մեջլիսի ընդհանուր 251 պատգամավորներից 223-ի հավանությամբ ընտրվեց Թուրքիայի մարդու իրավունքների պաշտպան...

Սա, մյուս կողմից, սակայն, նշանակում է Անկարայի անհանգստությունը՝ մասնավորապես կապված Ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, այդ ժամանակաընթացքում հայության իրագործելիք ծրագրերի ու միջոցառումների հետ: Ինչպես Մանոյանն է ընդգծում. «Թուրքիան այսօր անհանգստացած է ե՛ւ արտաքին, ե՛ւ ներքին ճակատներում», մասնավորապես ամենեւին պատահական չէ, որ թուրքական քաղաքներում հայտնվում են փողոցներ Թալեաթի անունով, հատկապես այն շրջաններում, որտեղ ազգությամբ հայ բնակիչներ են ապրում:

Ու եթե մեզանից շատերի համար տարակուսելի է դեռեւս, թե ինչո՞ւ 21-րդ դարի Թուրքիան չի ընդունում Ցեղասպանության փաստը, ապա նշենք, որ 21-րդ դարի Թուրքիայում... պարզապես Թալեաթ փաշայի անունով փողոցներ դեռ կան, ստեղծվում են:

Նույնը՝ Ադրբեջանում, գրող Աքրամ Այլիսլիի, ավելի ճիշտ՝ վերջինիս ականջի համար «Նոր Մուսավաթ» կուսակցությունը խոստացել է 10 հազար մանաթ (շուրջ 13 հազար դոլար): Պետությունը ոչ միայն չի դատապարտել այս ըստ էության հանցավոր, հանցագործության մղող «կուսակցական» պահանջը, այլեւ ինքը՝ զրկելով գրողին պետական տարբեր կոչումներից, մասնակիցն է այս հանցավոր պահանջին, ինչն արդեն իսկ հանցագործություն է: Այս առումով նկատենք, որ հատկապես Իսմայիլի շրջանում վերջերս տեղի ունեցած իրադարձություններից հետո, չի բացառվում, որ ադրբեջանական իշխանությունները «գրողի ականջ» գործողությունը ձեռնարկել են հասարակության ուշադրությունը ներքին հարցերից շեղելու համար, ինչն իր հերթին չի բացառում հավանականությունը, որ որքան մոտենան Ադրբեջանում գալիք հոկտեմբերին նախանշված նախագահական ընտրությունները, այնքան կարող է լարվել իրադրությունը շփման գծում, այլ կերպ ասած՝ արտաքին թշնամու հետ, շեղելու ուշադրությունը ներքին թշնամիներից ու թշնամությունից:

Այս համատեքստում հատկապես միջազգային ասպարեզում լայն հնչեղություն չի՞ ստանա, որ Հայաստանը, իսկ գուցե ավելի նպատակահարմար կլինի՝ Արցախի անկախ Հանրապետությունը քաղաքական ապաստան երաշխավորի գրող Աքրամ Այլիսլիին, դրանով իսկ ցույց տալով, որ հայկական զույգ պետություններում, հայ հասարակության մեջ «ադրբեջանատյացություն» չկա (անգամ այդ բառը չկա), բացի դրանից՝ ցուցաբերելով խիստ մարդասիրական քայլ՝ պաշտպանել գրողին հայրենի իշխանության, ծայրահեղաբար, արկածախնդրորեն տրամադրված հասարակության մի շերտի հալածանքներից ու հավանական հարձակումներից...

Ինչեւէ, Սամաթիայի եւ ողջ Թուրքիայի հայությունը, Հայաստանի Հանրապետությունն ու Սփյուռքը, ինչպես նաեւ Արցախի Հանրապետությունը, կարող ենք, անշուշտ, մտահոգվել, սակայն այդ մտահոգությունը զգոնության պետք է բերի, ոչ թե անհանգստության. անհանգստանում են մեղավորները, հետեւաբար անհանգստությունն այլ հասցեատեր ունի:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

ՀԱՅՐԻԿՅԱՆԻ ԳՈՐԾԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

# Էպոսագետ. Ինձ կմեղադրեն եւ կձերբակալեն

**Պարույր Հայրիկյանի դեմ կատարված մահափորձի գործի քննության համատեքստում օրերս առավել հաճախ է քննարկվում նախագահի թեկնածու, էպոսագետ Վարդան Սեդրակյանի անունը: Մահափորձի փաստի առթիվ հարուցված քրեական գործի շրջանակում ձերբակալված երկու անձինք՝ նախկինում թմրամիջոցների ապօրինի շրջանառության համար դատապարտված Խաչատուր Պողոսյանն ու**



**Սամվել Հարությունյանը բնակվում են նույն թաղամասում, ինչ էպոսագետը, եւ աշխատել են Սեդրակյանի մոտ եւ նրա Եղվարդի տունն են վերանորոգել: Էպոսագետը նրանց երկար տարիներ է ճանաչում, անգամ գիտի, որ տղաներից Խաչատուրը բանակ չի գնացել ու զենք բռնել էլ չի կարողանում: «Հազիվ 8-րդ դասարանն ավարտեց»: Մյուսը 7-րդ դասարանն էլ չավարտեց: «Մեկը նստած է դեղի վրա, որ կես ժամվա ընթացքում չտաս, ուզածդ բանը կգրի, կտա ձեռքդ, էն մյուսին էլ երեւի էնքան են ծեծել, որ նման բաներ է գրել: Սամվելի եղբայրը ձերբակալված է, նրանք խոցելի են», ասաց Սեդրակյանը՝ հավելելով, որ «ինչ-ինչ խոստումների համար հատուկ տվել են այդ ծրագիրը, որ իրականացնեն»:**

**Թեպետ առայժմ մեղադրանք չկա Սեդրակյանի դեմ, սակայն նախագահի թեկնածուն վստահ է, որ երբ ընտրություններն ավարտված լինեն, ցանկալի թվերը՝ նկարված, միջազգային դիտորդները հեռացած լինեն ու գործընթացներն ավարտված, իր դեմ մեղադրանք կառաջադրեն:**

**«Ես վստահ եմ, որ ինձ կմեղադրեն եւ կձերբակալեն: Վստահ եմ, որ մեղադրանք կներկայացնեն փետրվարի 22-23-ից հետո», ասաց Սեդրակյանը՝ հայտարարելով, որ երբ նախորդ տարի հունիսին հայտարարեց, որ առաջադրվում է նախագահի թեկնածու, աշնանից իրեն սկսեցին հարցերի շարք ուղղել, մասնավորապես Նաիրի Հունանյանի խմբի, հոկտեմբերի 27-ի առնչությամբ բազմաթիվ հարցեր, մինչդեռ ինքը Վազգեն Սարգսյանի հետ շատ մոտիկ հարաբերությունների մեջ է եղել:**

**«Ուզում են ֆոն ստեղծել, որ Սեդրակյանը տեռորիստ է», ասաց թեկնածուն՝ հավելելով, որ իրավապահ մարմիններից հստակ պատասխաններ եւ գնահատականներ է ցանկանում լսել իր մասնակցության առնչությամբ: Հակառակ պարագայում փակել այս թեման եւ չշոշափել իր անունը: Հ. Հ.**

# «Նիգ-Ապարան» հայրենակցական միությունը սատարում է Սերժ Սարգսյանին

**2013թ. փետրվարի 11-ին կայացել է «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախագահության ընդլայնված նիստ՝ Հայաստանի Հանրապետության առաջիկա նախագահական ընտրությունների վերաբերյալ դիրքորոշում արտահայտելու օրակարգով:**

**«Նիգ-Ապարան» հայրենակցական միությունը, հավատարիմ կազմակերպության կանոնադրական նպատակներին ու սկզբունքներին, կողմնորոշելու համար իր բազմահազար անդամներին, աջակիցներին, համակիրներին, միաձայն որոշեց պաշտպանել Հայաստանի Հանրապետության գործող նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը:**

**Նախագահության ընդլայնված նիստին մասնակցում էին Ազգային ժողովի պատգամավորներ, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ, հայրենակցական միությունների ներկայացուցիչներ:**

**Նիստը նախագահում էին «Նիգ-Ապարան» հայրենակցական միության նախագահ Սամվել Ալեքսանյանը եւ պատվավոր նախագահ Վրեժ Մարկոսյանը:**

«Նիգ-Ապարան» ՀԲՀԿ

# Մտավորականությունն ասելիք ունի, իշխանությունը՝ լսելիք

*1-ին էջից*

Ինչպես **Գալուստ Սահակյանն** ընդգծեց, այդ «շատ հաճելի միջավայրում» ակնհայտ դարձավ, որ մտավորականությունը նման հանդիպումների, քննարկումների կարիք ունի, ասելիք՝ իշխանությանը, ընդ որում՝ սկսած անձնական, մտավորականների կենսապայմաններին վերաբերող հարցերից, մինչեւ առանձին ոլորտային եւ ընդհանուր հայեցակարգային հարցեր: Օրինակ՝ գրող-հրապարակախոս, թարգմանիչ **Բաբկեն Սիմոնյանին** հետաքրքրում էր, թե կա՞ արդյոք շրջանառության մեջ հատկապես որեւէ տեղ չաշխատող մտավորականներին թոշակ տրամադրելու հարցը եւ կամ արտագաղթը, ինչպես Սիմոնյանն ինքը որակեց՝ «այդ չարիքը» կանխելու ռազմավարություն:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան **Էդիկ Մինասյանն** իր հերթին առաջարկությամբ հանդես եկավ, որպեսզի բուհական համակարգը եւս, Գիտությունների ակադեմիայի օրինակով, ընդգրկվի սոցիալական փաթեթում, ԳԱԱ-ի օրգանական քիմիայի ինստիտուտի գիտաշխատող, ՌԱԿ վարչության անդամ **Մեսրոպ Հարությունյանն** առաջարկեց, որ ԳԱԱ-ն ունենա նախագահ, երկու փոխնախագահներ՝ հասարակական հիմունքներով աշխատող, իսկ կրթության, գիտության ոլորտի այն մի շարք կոմիտեները, հիմնարկները, որոնք այսօր կան, լուծարվեն, փոխարենը խնայված միջոցները տրամադրվեն կոնկրետ ոլորտային ինստիտուտներին: Նա բարձրացրեց նաեւ գիտական աստիճան ունեցողներին վճարվող հավելավճարների հարցը: Նրա ասելով, առաջիկայում կիրառվելիք հարկային նոր կարգի պայմաններում այդ հավելավճարները չեզոքանալու են: «Ումո՞վ ենք գնում դեպի ապահով Հայաստան, եթե ոչ գիտնականներով», իր հերթին ընդգծեց **Գրիգոր Մնացականյանը**:

ՀՀԿ փոխնախագահն իր հերթին շեշտեց. «Ապահով Հայաստան նշանակում է կոռուպցիայի ու արտագաղթի չլինելը, դա ուղղորդող գործընթաց է բոլոր քաղաքական ուժերի համար, եւ որին պետք է հետամուտ լինենք բոլորս...»: Առաջիկա հինգ տարիների առումով Գալուստ Սահակյանն ընդգծեց նաեւ, որ «մենք լավ մտավորականություն ունենք եւ լավ երիտասարդներ»: Իր հերթին Մանկավարժական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի ղեկավար **Լեւոն Շիրինյանն** ասաց. «Հայաստանում գալիք հինգ տարիների ընթացքում պետք է սկսվի արդիականացման գործընթաց՝ հիմնված ազգային արժեհամակարգի վրա, այս առումով մտավորականները պետք է օգնեն իշխանություններին, եթե վերջիններս դրա ցանկությունն ունենան»: Այլ ոչ թե, ինչպես ԵՊՀ-ն ներկայացնող պատմաբան **Էդվարդ Ջոհրաբյանը** նկատեց. «Մտավորականներին հիշում են միայն ընտրությունների ժամանակ, իսկ ընտրություններից հետո մոռանում»: Եվ որպեսզի այսպես չլինի, տեխնիկական գիտությունների թեկնածու **Սամվել Թադեւոսյանը** գալիք հինգ տարիների համար առաջարկեց. «Պետական պահանջատիրության ուժեղացում՝ բոլոր ինստիտուտների նկատմամբ, պետական օժանդակության ապահովում եւ մրցակցային դաշտի ստեղծում»: «Միայն թե այսօր միայն խոսակցությամբ չվերջացնենք», հայտարարեց ակադեմիկոս, գյուտարար **Պողոսյանն** ու հավելեց. «Իհարկե, միանշանակ, պետք է նախագահ լինի Սերժ Ազատիչը, բայց մենք պետք է ունենանք քննադատական մոտեցումներ»:

Գալուստ Սահակյանը նկատեց, որ «Ավելի լավ է էստեղ լինեն սուր քննադատությունները, միեւնույն է, դրանք պատերի տակ են լինում»: Իսկ առհասարակ, ՀՀԿ փոխնախագահը ողջ քննարկման ժամանակ միայն մեկ անգամ ելույթ ունեցավ, ու հիմնականում լսում էր... մտավորականությանը, փաստելով, որ իշխանությունը մտավորականներին լսելու կարիք ունի, դրա անհրաժեշտությունն ուղղակի կա: Վերջինս էլ խոսելու, արտահայտվելու, այո, քննադատելու, առաջարկելու, նախաձեռնելու կարիքն ունի, եթե չասենք՝ առաքելությունը: Հետեւաբար, ինչպես ՌԱԿ ատենապետ Հակոբ Ավետիքյանն ընդգծեց, նման հանդիպումներն ու քննարկումները շարունակական կլինեն, հետագայում դառնալով առավել ոլորտային, երբ տվյալ ոլորտի պատասխանատուն կիրավիրվի ոլորտի մասնագետների հետ հանդիպում-քննարկման:

ՌԱԿ ատենադպիր **Սուրեն Սարգսյանը**, որը վարում էր քննարկումը, իր հերթին հավելեց, որ մտավորականների առաջարկությունները ոլորտի պատասխանատուներին, առավել առարկայական լինելու համար, կլինեն նաեւ գրավոր ձեւակերպված, օրինակ՝ պատմաբան Աշոտ Ներսիսյանը լուրջ առաջարկություններ ունի արտաքին քաղաքականության՝ Ցեղասպանության եւ Արցախի հիմնահարցի վերաբերյալ... «Մենք հավատում ենք մեր գործընթացներին եւ մեր թեկնածուին, եւ առաջիկա հինգ տարիներն ամենաբարեկեցիկն են լինելու», ասաց Գալուստ Սահակյանը իր ելույթում: Հուսանք, որ առաջիկա հինգ տարիներին եւ դրանցից հետո էլ մենք ժամանակի ու ապագայի քիչ խնդիրներ կունենանք, իսկ նման քննարկումներ, հանդիպումներ՝ շատ:

# Հպարտօրէն զօրակցելով ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին

*1-ին էջից*

Արդարեւ, ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութիւնը որդեգրելով խիզախ մտայղացումը, ուրբաթ 8 փետրուարին, «Փրոմենադ» հիւրանոցի շքեղ սրահին մէջ համախմբեց հոծ բազմութեամբ Հայաստանով տոգորուած հայորդիներ, որոնք խոր համոզումով եկած էին իրենց զօրակցութիւնը յայտնելու ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանին, յառաջիկայ փետրուարի 18ին կայանալիք նախագահական ընտրութիւններուն:

Երեկոյթը իրենց ներկայութեամբ պատուած էին Լիբանան հաստատուած դիւանագիտական ներկայացուցիչներ, Հայաստանի, Սբ Էջմիածնի եւ Սփիւռքի մէջ բազմաթիւ բարերարութիւններ ի գործ դրած՝ «Փիւնիկ» հիմնադրամի նախագահ Գաբրիէլ Չեմպերճեանը, Ռամկավար Ազատական կուսակցութեան Լիբանանի ղեկավար մարմինը, Թէքէեան մշակութային միութեան հիմնադիրներու մարմինը, ՀԲԸ Միութեան եւ ՀԵԸ-ի պատուական ղեկավարներ, ՌԱԿ-ի ի նպաստ Հայաստանի որդեգրած ուղեգիծին համախոհ քոյր կազմակերպութիւններ ու համակիր բարեկամներ:



Ընդունելի իրողութիւն էր այդ օր սրահին տարբեր տարազաւորումը, որ Մայր հայրենիք կը բուրէր: Հայաստանի դրօշը կը ծածանէր փայլքով մը տիրական, երբ հնչեց ազատ, անկախ ու հպարտ Հայաստանի հիմներգը: «Դէպի ապահով Հայաստան» լոզունգը եւ նախագահ Սերժ Սարգսեանի «Դէպի ապահով Հայաստան» պաստառը կ՚իմաստաւորէր օրուան խորհուրդը եւ մերթ ընդ մերթ կը ցուցադրուէր տեսերիզ մը, որ կը համադրէր Սերժ Սարգսեան բանասէրի, արցախեան ազատամարտիկի, ռազմական պետութեան ղեկավարի եւ վերջապէս ՀՀ նախագահի կեանքը:

ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ **Յարութիւն Երկանեան**, թարգմանը հանդիսանալով ռամկավար գաղափարախօսութեան, ներկաներուն յայտնեց նպատակը երեկոյթին: «Այսօր,- ըսաւ ան,- աննախընթաց երեկոյ մըն է, որ կը համախմբէ մեզ այս սրահին մէջ: Երեկոն նուիրուած է Հայաստանի Հանրապետութեան նախագահ, նախագահութեան թեկնածու Սերժ Սարգսեանի վերընտրման ընտրարշաւին: Այո՛, մենք համոզուած ենք, որ այս ձեռնարկին իմաստը շատ աւելի խորն է, քան անոր երեւոյթը:

Հզօր եւ ապահով պետականութիւն մը ունենալը նախապայման է ազգերու գոյատեւման եւ անոնց ընկերատնտեսական յառաջդիմութեան եւ բարգաւաճումին համար:

Մեր նախահայրերէն ժառանգած Հայրենիքին գոյատեւումը, մեր բոլորին հաւաքական պարտականութիւնն է զոր պէտք է կատարենք խոհեմութեամբ, հզօր եւ ամբողջական պահելու համար մեր ազգային պետութիւնը, հաւատքը, օրինականութիւնը, տնտեսական, գիտական ու մշակութային յառաջընթացը:

Ներկայ Հայաստանի Հանրապետութիւնը մեր նախահայրերուն հիմնած պետականութեան ժառանգորդն է: Պատահական չէ, որ հայրենի գերագոյն իշխանութիւնը կ՚ընթանայ իր նախնիներուն գծած ուղիով, առաւել եւս ծաղկեցնելով ու շէնցնելով զայն»:

Բոլոր ազգերն իրենց երկրին անկախութիւնը ձեռք ձգելու համար հզօրագոյն ճիգեր ներդրած, արիւն ու քրտինք թափելով գծած են իրենց ուղեգիծը: «Ասկէ աւելի քան 21 տարիներ առաջ, Հայաստանի անկախութեամբ մեր հայրենիքի վարչակարգը խորհրդային իշխանութենէն անցում կատարելով որդեգրեց ռամկավարական սկզբունքներ: Բան մը՝ որ ՌԱԿ-ը իր հիմնադրութեան օրերէն ի վեր կը ձգտէր ունենալ, պետականութիւն մը՝ հիմնուած ժողովրդավարական սկզբունքներու վրայ:

Այսօր, 22 տարիներէ ի վեր մեր ժողովուրդին կարեւոր մէկ հատուածը կ՚ապրի ազատ եւ անկախ Հայաստանի մէջ: Այս իրողութիւնը կ՚ապացուցէ, թէ մենք՝ մեր ճիգերով կերտած ենք մեր ներկան՝ նախանշելով ապագայի մեր ուղին: Դէպի անկախութիւն տանող մեր անցած ճանապարհները մի՛շտ ալ եղած են փշոտ, սակայն այդ փորձառութենէն քաղած մեր դասերը կոփած են մեզ ու դարձուցած աւելի՛ փորձառու եւ աւելի՛ ամուր:

Ամէն կասկածէ վեր է, որ մեզմէ իւրաքանչիւրին սիրտը կը ցաւի Հայաստանի համար, եւ կ՚ոգեւորուի անոր արձանագրած յաջողութիւններով: Բոլորս կը սիրենք մեր Հայրենիքը եւ բոլորս ալ պատրաստակամութիւն կը վերցնենք աջակցելու անոր շէնացման ու բարգաւաճման գործին մէջ:

Այսօր մենք պետականաշինութեան ճանապարհին յոյժ կարեւոր ժամանակահատուած մը շրջանցած ենք: «Անկախութեան 22 տարիներու ընթացքին կրցած ենք լրջագոյն յաջողութիւններ արձանագրել, որոնք հնարաւորութիւն կ՚ընձեռեն ընթանալու զարգացման անշրջելի ճանապարհով», կը յայտնէ ներկայ Հայաստանի պատուական նախագահը իր ընտրական ծրագրին մէջ»:

Հայաստանի անկախութեան հռչակումէն ետք մենք ունեցանք երեք պատուական նախագահներ, սակայն ՀՀ նախագահ Սերժ Սարգսեան կը բնորոշուէր այլ խորհուրդով մը: Անոր հայրենական կեանքի հանգրուանները անջնջելի կերպով դրոշմուած են արցախեան մայր հողին ընդերքը եւ որոգուած արիւն ու քրտինքով: Մեր պատմութեան ընթացքին միշտ ալ ձգտած ենք ունենալ ազգային բանակ: Ներկայիս շնորհիւ մեր մարտունակ բանակին, կ՚ապահովուի մեր Հայրենիքի անվտանգութիւնը, որովհետեւ ան առաջատար է նոյնիսկ շատ աւելի հարուստ երկիրներու բանակներէն:

Ընդունուած իրողութիւն է, որ մեր Հայրենիքը այսօր շրջափակուած է ատելավառ ոգիով լեցուն կարգ մը դրացիներով, որոնք վտանգ կը սպառնան ե՛ւ մեր ժողովուրդին եւ թէ՛ մեր հայրենիքին:

Մենք կը յայտարարենք, թէ ո՛չ մէկ ժողովուրդ եւ ո՛չ մէկ ազգ հայ ժողովուրդին կողմէ չ՚ընկալուիր որպէս թշնամի: Հայ ժողովուրդը կը պահանջէ իր հարեւան երկիրներէն դադրեցնելու բռնութեան եւ ատելութեան մղող քաղաքականութիւնը եւ առաջնորդուիլ միայն ու միայն խաղաղ բանակցութեամբ եւ խնդիրներուն խաղաղ լուծումներ գտնելու ճամբով:

Ամէն պարագայի, սակայն, Հայաստանի Հանրապետութեան շուրջ ձեւաւորուած ռազմաքաղաքական իրավիճակը եւ երկրին առջեւ ծառացած մարտահրաւէրները կը պահանջեն մեզմէ ունենալ մարտունակ, մշտապէս կատարելագործուող, ռազմական գիտութեան արդի ձեռքբերումները կիրառող զինուած ուժեր, որոնք յառաջիկայ 5 տարիներու ընթացքին ունակ ըլլան իրենց մարտունակութեամբ խաղաղութիւն պարտադրելու տարածաշրջանին մէջ»:

Բնական երեւոյթ է, որ Հայաստանի անկախութենէն ետք, մեր հայրենիքը ներգրաւուեցաւ միջազգային յարաբերութիւններու ոլորտին մէջ: Վերջին հնգամեակին, յատկապէս միջազգային ասպարէզի վրայ ոստումներով լեցուն յաջողութիւններ արձանագրուեցան, կայունացան մեր միջազգային գործունէութեան իրաւական հիմքերը, ընդ որում հայրենիքի իշխանութիւններու ուշադրութեան կեդրոնը հանդիսացան՝

1.- Անվտանգութեան արտաքին բաղադրիչներու ամրապնդումը:

2.- Արցախեան հիմնախնդիրի արդար եւ խաղաղ կարգաւորումը:

3.- Հայաստանի միջազգային քաղաքական եւ տնտեսական ներգրաւուածութեան ընդլայնումը

4.- Համազգային նշանակութիւն ունեցող խնդիրներուն հետամուտ ըլլալը եւ համայն հայութեան, յատկապէս սփիւռքահայութեան գերխնդիրը՝ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման եւ անոր հետեւանքներու վերացման գործընթացին նոր թափ հաղորդելը:

5.- Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու՝ առանց նախապայմաններու կարգաւորման քաղաքական ուղեգիծին շարունակումը:

Մեզի՝ լիբանանահայերուս համար խիստ կարեւոր իրադարձութիւն էր ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի այցը Լիբանան: Լիբանանի նախագահ Միշել Սըլէյմանի հետ ան առիթ ունեցաւ քննարկելու տարածաշրջանի ճգնաժամային պայմանները, որոնք քաղաքական քննարկումներու ծիրէն ներս կարեւոր տեղ կը զբաղեցնեն: Այցը կը սատարէր նաեւ Երեւան-Պէյրութ միջպետական յարաբերութիւններու առաւել աշխուժացման, ընդ որում բազմաթիւ պայմանագրեր կնքուեցան մեր երկու երկիրներուն միջեւ»:

ՌԱԿ Լիբանանի Շրջանային վարչութեան ատենապետ Յարութիւն Երկանեան իր խօսքի աւարտին եզրակացուց. «Մեր պատմութեան ընթացքին, լիբանանահայերս շնորհիւ մեր մեծ ներուժին, միշտ ալ լիարժէք եւ արդիւնաւէտ կերպով գործած ենք «Յանուն Հայրենիքի» նշանաբանով, ընդ որում՝ հնարաւորութիւն ունեցած ենք արձանագրել նորանոր յաջողութիւններ հայ-լիբանանեան յարաբերութիւններու զարգացման, Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման, համազգային միւս գերխնդիրներու լուծման ճանապարհին:

Մենք՝ Ռամկավար Ազատականներս՝ միշտ ալ եղած ենք Հայաստանի կողքին, ըլլայ Խորհրդային Հայաստանի տարիներուն եւ թէ՛ 21-ամեայ անկախ Հանրապետութեան բոլոր դժուարին պահերուն: Արցախեան գոյամարտի, երկրաշարժի, արհաւիրքներու դժուար օրերուն զօրավիգ հանդիսացած ենք ու սատարած Հայաստանին ու Արցախին, նպաստա՛ծ ենք մեր Մայր հայրենիքի կայացման, աջակցա՛ծ ենք երկրի տնտեսաքաղաքական յառաջընթացին:

Այսօր պահն է զօրակոչի ենթարկելու մեր հայրենասիրական զգացումները եւ առաւել եւս ուժգնօրէն ցուցաբերելու մեր հետաքրքրութիւնը հանդէպ մեր Հայրենիքին, առաւե՛լ եւս կառչածութիւն, վստահութիւն եւ խոր հաւատք տածելու մեր օրէ օր ծաղկող Հայաստանին»:

Այո՛, միայն այս հաւատքով է որ միասնաբար կրնանք ընթանալ դէպի պայծառ ապագան, ունենալու համար գերհզօր Հայրենիք եւ ապահով Հանրապետութիւն:

Միայն այս հաւատքով է որ մենք կրնանք ձգտիլ մեր Մեծ երազին՝ ամբողջական Հայաստանին:

ՊԱՅԾԻԿ ԳԱԼԱՅՃԵԱՆ
Խմբագիր «Զարթօնք» օրաթերթի

---

**ԿԱՆԱԴԱ**

## 100 հազար դոլարի նվիրատվություն «Զորյան ինստիտուտին»

**Միջազգային ճանաչման արժանացած գործարար, արդյունաբերական ծրագրերի առաջնակարգ կապալառու Անրի Սարգսյանը 100 հազար դոլարի պատկառելի նվիրատվություն է կատարել Կանադայում գործող «Զորյան ինստիտուտին», որի առաքելությունն է միջազգային հանրությանը ծանոթացնել մարդու իրավունքների, ցեղասպանությունների կանխարգելմանը եւ ճանաչմանը առնչվող հարցերին, տեղեկացնում է խմբագրությանը հասցեագրված մամուլի հաղորդագրությունը:**

**Բեյրութաբնակ բարեգործ Սարգսյանը, որ աֆրիկյան եւ Պարսից ծոցի երկրներում, ինչպես նաեւ Հյուսիսային Ամերիկայի տարբեր նահանգներում բազմաթիվ գրասենյակների սեփականատերն է, արդեն երկար ժամանակ մոտիկից հետեւել եւ պաշտպանել է «Զորյան ինստիտուտի» գործունեությունը: «Հաստատությունը արժանի է մեր համեստ նվիրատվությանը», գրել է նա ի պատասխան ինստիտուտի շնորհակալական նամակին:**

**Ինստիտուտի գործադիր տնօրեն Ջորջ Շիրինյանի խոսքերով՝ արդեն 30 տարի գոյություն ունի «Զորյան» հաստատությունը, եւ Սարգսյանների նման մարդկանց խրախուսական արարքների շնորհիվ է, որ իրենք կարողանում են առաջ տանել իրենց առաքելությունը:**

Հ. Ծ.

**ՀՈՒՆԱՍՏԱՆ**

## Տիգրան Աբասյանին շնորհվել է «Պողոս Նուբար Փաշա» մեդալ

**«Արմինյա միռոր-սփեքթեյթր» շաբաթաթերթի հունվարի 26-ի համարը տեղեկացնում է, որ դեկտեմբերի 28-ին Աթենքի հայկական դեսպանատանը կայացած պաշտոնական արարողության ժամանակ Հունաստանում ՀՀ դեսպան Գագիկ Ղալաչյանը սփյուռքի նախարարության «Պողոս Նուբար Փաշա» մեդալն է շնորհել ՀԲԸՄ-ի Հունաստանի շրջանակային հանձնաժողովի ատենապետ Տիգրան Աբասյանին տեղի հայկական համայնքին իր տարանամյա նվիրվածության եւ անսակարկ ծառայությունների համար:**

**Աբասյանը Կիպրոսի Մելգոնյան կրթական հաստատության շրջանավարտներից է: Համակարգչային տվյալների վերլուծաբան-մասնագետը արդեն ավելի քան 2 տասնամյակ վարում է տեղի ՀԲԸՄ-ի ատենապետի պաշտոնը: Նա նաեւ ղեկավար պաշտոններ է զբաղեցրել ՌԱկուսակցության եւ «Արարատ մշակութային ասոցիացիայի» շարքերում, իր ծառայությունները բերել ՀԲԸՄ-ի Գալֆայան ամենօրյա վարժարանին եւ ՌԱԿ-ի երեք լեզուներով (հունարեն, հայերեն, անգլերեն) լույս տեսնող «Նոր աշխարհ» շաբաթաթերթին:**

**Մեր անկեղծ շնորհավորանքները եւ առաջիկայում նորանոր հաջողությունների մաղթանքները նրան:**

Հ. Ծ

# Ի՞նչ են ուզում ադրբեջանցիները եւ ինչո՞ւ հասկապես Բարաք Օբամայից

Սպիտակ տան կայքում, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, «հրապարակված է ԱՄՆ նախագահ Բարաք Օբամային ուղղված հանրագիր, որով կոչ է արվում հայտարարել «Խոջալուում ռազմական հանցագործության զոհերի հիշատակի» (չակերտները մերն են -Վ. Ա.) օր»: Այնտեղ ասված է. «Փետրվարի 26-ին ադրբեջանական ծագմամբ ադրբեջանցիների խումբը եւ ԱՄՆ-ում բնակվող՝ ադրբեջանցիների բոլոր բարեկամները կնշեն 1990-ական թվականների ամենասարսափելի իրադարձություններից մեկի, 20-րդ դարի երկրորդ կեսում նախկին ԽՍՀՄ իշխանությունների ամենամեծ ռազմական հանցագործության՝ Խոջալուի կոտորածի 21-րդ տարելիցը»:

Ուշադրություն է հայցում, որ 1992 թ. փետրվարի 25-26-ին տեղի ունեցած «կոտորածը» նախ վերագրվում է նախկին ԽՍՀՄ իշխանություններին, ապա հավելվում, որ «մարդկության դեմ այդ հանցագործությունը կատարվել եւ ճանաչվել է Հայաստանի նախագահի կողմից», ինչը խոսում է հանրագրի նախաձեռնողների, մեղմ ասած, ոչ հետեւողականության կամ անիրազեկության մասին: Այնուհետեւ նրանք դիմում են ԱՄՆ նախագահին եւ խնդրում «օգնել՝ ստանալու Խոջալուի կոտորածին եւ զոհերին նվիրված նախագահական պրոկլամացիա»: Ադրբեջանական աղբյուրները փոխանցում են, որ «հանրագրին արդեն միացել է 65 000 հոգի, իսկ նախագահ Օբաման դրան կանդրադառնա, եթե մինչեւ փետրվարի 23-ը հավաքվի 100 000 ստորագրություն»:

Որքա՞ն է իրականությանը մոտ հարեւան երկրի քարոզչամեքենայի հերթական «նախաձեռնողականությունը»՝ այլ խնդիր է: Հաղորդվում է, որ ԱՄՆ մի քանի նահանգներում այդ հարցով օրենսդիրներն արդեն իսկ քննարկումներ արել են: Իսկ օրերս Ադրբեջանի ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչն իր երկրի արտաքին քաղաքականության գերակայություններից մեկն է համարել «Խոջալուի ցեղասպանության միջազգային ճանաչումը»:

Մենք, ցավոք, այս կարգի տեղեկատվությանը կամ լուրջ ուշադրություն չենք դարձնում, կամ արձագանքում ենք ուշացած, երբեմն էլ՝ ոչ համարժեք: Մինչդեռ տեղեկատվության անգամ բաց աղբյուրների նույնիսկ թռուցիկ-սիրողական մակարդակի ուսումնասիրությունը թույլ է տալիս տիրապետել այնպիսի «մանրուքների», որոնց համադրումը, մասնագիտական վերլուծությունը եւ գնահատականը հնարավորություն կտան միջազգային մակարդակով չեզոքացնելու ադրբեջանական կողմի նկրտումները:

www.erevangala500.com՝ Ադրբեջանի նախագահի աշխատակազմի տեղեկատվական վերլուծության եւ ապահովության բաժնի վերահսկողությամբ գործարկված կայքի «Գրադարան» բաժնում տեղադրված է Հ. Յաղուբլիի «Խոջալուի կոտորածը» (ադրբեջաներեն) ուսումնասիրությունը: Այն գրվել եւ հրատարակվել է 1992-ին: Այստեղ հանդիպում ենք մի քանի ուշագրավ վկայությունների:

«Խոջալուի դատախազ» Աթաֆիշիեւը, որն, ի դեպ, տեղացի չէր, այլ՝ Աղջաբեդիից գործուղված եւ փետրվարի 25-ի կեսօրին, այն է՝ ռազմագործողությունից ժամեր առաջ, միայն իրեն հայտնի ճանապարհով եւ մի քանի հոգու ուղեկցությամբ արդեն գտնվել է Աղդամում, ուսումնասիրության հեղինակին ասել է, որ Խոջալուն սնուցող էլեկտրահոսքագիծը խորտակել են իրենք, «որպեսզի Ստեփանակերտում զրահատեխնիկայի վերանորոգման գործարանի աշխատանքը խափանվի»:

1991-92 թթ. ձմռանը Ստեփանակերտում նման գործարան չի եղել եւ չէր էլ կարող լինել: Ուստի Աթաֆիշիեւի ասածը պետք է հասկանալ այնպես, որ Խոջալուում որոշել են թե՛ իրենց, թե՛ ԼՂՀ մայրաքաղաքի եւ հարակից հայկական գյուղերի բնակչությանը զրկել էլեկտրական հոսանքից: Իրենք էլ տառապել են, բայց ավելի մեծ է եղել Ստեփանակերտի կենսագործունեությունը խափանելու ցանկությունը: Կամ էլ Խոջալուում այդ քայլին գնացել են՝ կատարելով Ադրբեջանի իշխանությունների կամ Ժողճակատի առաջնորդների հրամանը:

Սա կարեւորագույն հանգամանք է. Խոջալուի մասին գրեթե բոլոր նյութերում հատուկ ընդգծվում է, որ այնտեղ «ամիսներ ի վեր չի եղել գազ, էլեկտրականություն, խզված էր հեռախոսակապը»: Աթաֆիշիեւը վկայել է, որ Խոջալուն հոսանքազրկվել է, որպեսզի խափանվի Ստեփանակերտի էլեկտրամատակարարումը: Դառնանք հեռախոսակապի խնդրին: Նույն տեղում Խոջալուի «գործադիր իշխանության ղեկավար» Էլման Մամեդովը վկայել է. «Փետրվարի 25-ի ժամը 9-ի (21-ի) սահմաններում ինձ զանգեցին եւ ասացին, որ ֆիննական տնակների (1989-90 թթ. Ադրբեջանի կողմից կառուցված նոր թաղամասի, որ անմիջապես հարում էր Ստեփանակերտ-Ասկերան մայրուղուն- Վ.Ա.) մոտից 1 ԲՄՊ (հետեւակի մարտական մեքենա) է անցել: Ապա ասացին, որ Աղդամից զանգել են, որ 4 տանկ է գալիս՝ չկրակենք»:

*Տես՝ էջ 8*

## Միջուկային փորձարկում ԿԺԴՀ-ում




Հյուսիսային Կորեայի կառավարությունը փետրվարի 12-ին պաշտոնապես հայտարարեց, որ հաջողությամբ իրականացվել է ստորգետնյա միջուկային պայթեցում: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը:

Փենյանում ընդգծել են, որ երկրի հյուսիս-արեւելքում գտնվող զինափորձարանում փորձարկվել է ոչ թե պարզապես միջուկային ռումբ, այլ «մեծ հզորության փոքր միջուկային լիցք»: ԿԺԴՀ իշխանությունները չեն մանրամասնել, թե դա ինչ է նշանակում, բայց նշել են, որ ամեն ինչ տեղի է ունեցել անվտանգ կերպով եւ եղել է տեխնիկապես անթերի:

Իր հերթին Հարավային Կորեան հաստատել է ԿԺԴՀ-ում ստորգետնյա միջուկային պայթեցման փաստը: Այդ մասին հաղորդում է Ռոյթեր գործակալությունը, վկայակոչելով հարավկորեացի նախագահի վարչակազմին:

Սեուլը դատապարտել է իր հյուսիսային հարեւանի գործողությունները, դրանք համարելով սադրիչ: Հարավային Կորեայի խնդրանքով փետրվարի 12-ի հետմիջօրեին Նյու Յորքում տեղի է ունեցել ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի արտակարգ նիստ, որը նվիրված էր հյուսիսկորեացիների միջուկային փորձարկմանը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունը դատապարտել է պայթեցումը, այն անվանելով ՄԱԿ-ի ընդունած բանաձեւերի խախտում:

Միջուկային պայթյունի իրականացման մասին անմիջապես հայտնի էր դարձել ամերիկյան հատուկ սարքավորումների շնորհիվ, որոնք հնարավորություն են տալիս արձանագրել ամբողջ աշխարհում տեղի ունեցող ստորգետնյա ցնցումները: Հյուսիսկորեացիների միջուկային պայթեցումը արդեն 3-րդն է 2006թ.-ից ի վեր: Մասնագետների տվյալների համաձայն, այն շատ ավելի հզոր էր 2006-ին եւ 2009-ին իրականացված պայթյուններից, նշում է «Ալ Ջազիրա» հեռուստաալիքը:

Ավելի վաղ Փենյանը հայտարարել էր, որ մտադիր է միջուկային զենքի փորձարկումներ իրականացնել իր արբանյակի արձակմանը հաջորդած ՄԱԿ-ի պատժամիջոցներին ի պատասխան: Հյուսիսկորեացիները պնդում են, թե արբանյակն արձակվել է բացառապես խաղաղ նպատակներով, սակայն աշխարհի երկրների մեծամասնությունը դա համարում է բալիստիկական հրթիռի փորձարկում:

ՎԱՏԻԿԱՆ

# Բենեդիկտոս 16-րդը կհեռանա մենաստան

### *Հաջորդ պապը կարող է լինել սեւամորթ*



**Վերջին 600 տարվա ընթացքում առաջին անգամ կաթոլիկ եկեղեցու հովվապետը հրաժարվում է գահից: Հռոմի Բենեդիկտոս 16-րդ պապը փետրվարի 11-ին կարդինալների ժողովում անսպասելիորեն հայտարարեց, որ պատրաստվում է վայր դնել եկեղեցու հովվապետի պարտականությունները, քանի որ իր հոգեւոր եւ մարմնական առողջությունը այլեւս թույլ չի տալիս շարունակել եկեղեցուն ծառայելու առաքելությունը:**

**Պապի առողջական վիճակի վատթարացման մասին հայտնի էր վաղուց: Այս տարվա ապրիլին կլրանա Բենեդիկտոս 16-րդի 86 տարին: Արդեն 2005-ին պապ ընտրվելիս նա կաթոլիկ եկեղեցու ամենատարեց առաջնորդներից մեկն էր նորագույն պատմության մեջ: Դեռ կարդինալ եղած տարիներին նա ինսուլտ էր անցկացրել, իսկ վերջին ժամանակներս դժվարությամբ էր քայլում, Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում պատարագ մատուցելու համար նրան տեղաշարժում էին հատուկ հարթակի վրա, նշում է Ռոյթեր գործակալությունը:**

**Թեեւ պապի առողջական վիճակի վատթարացումը որեւէ մեկի համար գաղտնիք չէր, սակայն նրա հնարավոր պաշտոնաթողության մասին որեւէ խոսակցություն չէր եղել: Վատիկանի առաջնորդներից ոչ մեկը գահից ինքնակամ չէր հրաժարվել 1415-ից ի վեր, երբ Գրիգորիոս 12-րդ պապը գահը թողեց հանուն եկեղեցու միասնականության, որն այն ժամանակ հայտնվել էր միանգամից երեք պապերի ձեռքին:**

**Հենց որ հայտնի դարձավ հրաժարական տալու Բենեդիկտոս 16-րդի մտադրության մասին, ոմանք ենթադրություններ արեցին, թե որոշումը կապված է ոչ միայն առողջական, այլեւ ուրիշ խնդիրների հետ: Պապի ներկայացուցիչները նույնիսկ ստիպված եղան պաշտոնական պարզաբանումներ տալ, որ Վատիկանում ներքին հակասություններ գոյություն չունեն:**

**Նախորդ պապի՝ Հովհաննես-Պողոս Բ-ի ազատական եւ բարեփոխական հովվապետությունից հետո շատերը երկյուղ ունեին, որ կաթոլիկ եկեղեցին ցնցած մանկապղծության սկանդալները եւ կին քահանաների ձեռնադրման հետ կապված վեճերը Բենեդիկտոս 16-ին (նախկին կարդինալ Ռացինգեր) կստիպեն կոշտացնել դիրքորոշումը մի շարք հարցերում: Սակայն դա տեղի չունեցավ, մասամբ՝ նոր պապի թույլ առողջության պատճառով: Ընդհակառակը, Վատիկանում ջանում էին հետ չմնալ գիտատեխնիկական առաջընթացից. նոր պապը հավատացյալների հետ կապ էր պահպանում ոչ միայն ավանդական այցելությունների եւ հանդիսությունների ժամանակ, այլեւ սոցիալական ցանցերի միջոցով: Պապի հրաժարականի պահին բաժանորդների թիվը հասել էր մեկուկես միլիոնի:**

**Վատիկանի մամլո ծառայության ղեկավար Ֆեդերիկո Լոմբարդին լրատվամիջոցներին հայտնել է, որ Բենեդիկտոս 16-ի գահակալությունը կավարտվի փետրվարի 28-ին: Դրանից հետո նա որոշ ժամանակ կբնակվի Հռոմին մերձակա իր ամառային նստավայրում, իսկ հետո կապաշխարի Վատիկանի տարածքում գտնվող նախկին մենաստանում:**

**Նոր պապի ընտրությունը տեղի կունենա մինչեւ մարտի վերջը կայանալիք կարդինալների ժողովում: Ամենահավանական թեկնածուն Գանայի ներկայացուցիչն է՝ 64-ամյա սեւամորթ կարդինալ Պիտեր Կոդվո Ապպիահ Տերկսոնը: Ներկայումս նա Արդարության եւ խաղաղության պապական խորհրդի նախագահն է:**

# Պուտինի օրինագիծը պաշտոնյաներին արգելում է հաշիվ ունենալ արտերկրի բանկերում

**Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը Պետդումային օրինագիծ է ներկայացրել, որով պաշտոնյաներին արգելվում է փողերը պահել արտերկրի բանկերում: Այդ մասին հաղորդում է ՌԻԱ գործակալությունը: Սահմանափակումները վերաբերում են ՌԴ եւ դրա սուբյեկտների պետական պաշտոններ զբաղեցնող անձանց, դաշնային պետծառայողներին, եթե այդ պաշտոններում նրանց նշանակում է նախագահը, կառավարությունը կամ գլխավոր դատախազը, ինչպես նաեւ Ռուսաստանի Բանկի տնօրենների խորհրդի անդամներին:**

**Պատգամավորները որոշել են օտարերկրյա ակտիվներն արգելող օրինագծում ուղղումներ կատարել մինչեւ փետրվար ամիսը ներառյալ: Մինչեւ օրս կատարված վերջին խոշոր փոփոխությունը դարձավ արգելքի տարածումը պետկորպորացիաների, Կենտրոնական բանկի, Կենսաթոշակային հիմնադրամի ղեկավարների, ինչպես նաեւ դատավորների վրա: Համապատասխան ուղղումներ կատարվեցին հունվարի 30-ին:**

**Արտերկրում պաշտոնյաների կողմից ակտիվների ձեռքբերման դեմ ուղղված օրինագիծը առաջարկում է պետական եւ զինվորական ծառայողներին արգելել արտերկրում ունենալու անշարժ կալք: Օրինագիծը արգելքը խախտողների համար նախատեսում է 5-10 մլն ռուբլի տուգանք կամ մինչեւ 5 տարվա ազատազրկում:**

**Այս կանոնից բացառություն կարող է արվել ռուսական բանկերի օտարերկրյա մասնաճյուղերում միջոցների տեղաբաշխման դեպքում:**

ՉԻՆԱՍՏԱՆ

## Հոգով միշտ երիտասարդ Ազնավուրը Շանհայում



«Շառլ Ազնավուրը դիտում էր երեխաներին խաղալիս եւ հարկ եղած դեպքում օգնում նրանց: Շանհայի Յույուան հոգեբուժարանում մտավոր թերզարգացածությունից տառապող հիվանդներից շատ քչերը երեւի տեղյակ էին, որ այդ օրվա այցելուն համաշխարհային ճանաչման արժանացած տաղանդավոր դերասան, երգիչ եւ երգահան է», գրել է Ցյան Կունը «China Daily» օրաթերթում, որտեղից «Ամինյն միրոր-սփեքթեյթրը» արտատպել է իր լրատվությունը:

80-ամյա հայազգի լեգենդի երկրորդ այցելությունն է եղել սա մեկ տարվա ընթացքում: Առաջին անգամ Չինաստան է այցելել 2012-ի հունիսին, մասնակցելու «Շանհայի միջազգային կինոփառատոնի» գալա համերգին, որտեղ կատարել է երեք երգ: Դեկտեմբերին նա դարձյալ է գնացել Շանհայ իր կրտսեր որդու՝ Պատրիկի հետ: Դա եղել է անձնական այցելություն, որի ժամանակ բարեգործ երգիչը ժամանակ է գտել այցելելու վերոնշյալ «Խնդության տուն» հոգեբուժարանը, որտեղ հանդիպել է 19-35 տարեկան հիվանդների: Նա վերջերս է ավարտել իր շրջագայությունը Հարավային Ամերիկայում եւ պատրաստվում է Անգլիա մեկնել՝ նոր երգ ձայնագրելու համար:

«Նա հոգով երիտասարդ է եւ երբեք թոշակի չի անցնելու իմ կարծիքով», ասել է Ազնավուրի հինգ երեխաներից ամենափոքրը՝ Պատրիկը:

Չինական youku.com կայքում իր այցելության օրերին ցուցադրվել են Էդիթ Պիաֆի հետ իր համագործակցության վերաբերյալ կինոկադրեր, որոնց մեկնաբանության ժամանակ Ազնավուրը ասել է. «Ոչ, Պիաֆն ինձ չի օգնել առաջ գնալու իմ կարիերայում: Նա օգնում էր իր սիրածներին, իսկ ես ընդամենը իր ընկերն էի: Սիրածները գալիս են ու անց են կենում: Ընկերությունը տեւական է»:

Հ. Ծ.

## Գործվածքի վերականգնմանը նվիրված հայ-ճապոնական սեմինար

Երեկ Հայաստանի եւ Ճապոնիայի միջեւ դիվանագիտական հարաբերությունների հաստատման 20-ամյա հոբելյանի շրջանակում ճապոնական հիմնադրամի հովանավորությամբ Հայաստանի պատմության թանգարանում մեկնարկել է գործվածքի վերականգնմանը նվիրված սեմինարը: Սեմինարի շրջանակում ներկայացվում է ճապոնական ավանդական ներկման «Շիբորիձոմե» մեթոդը, իրականացվում են գործնական աշխատանքներ եւ վարպետության դասեր՝ դոկտոր Միե Իշիի կողմից:

Միե Իշիի վարպետության դասերը եւ սեմինարի նպատակն է մշակութային արժեքների պահպանման բնագավառում ամրապնդել Ճապոնիայի եւ Հայաստանի միջեւ կապերը եւ նպաստել Հայաստանում գործվածքի պահպանման գործընթացի հետագա զարգացմանն ու ամրապնդմանը: Այս սեմինարը շարունակությունն է 2011 թ. հունիսին Երեւանում ստորագրված «ՀՀ մշակույթի նախարարության եւ Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտության ինստիտուտի միջեւ Հայաստանի մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ» համաձայնագիր եւ «Տոկիոյի մշակութային արժեքների ազգային հետազոտության ինստիտուտի եւ Հայաստանի պատմության թանգարանի միջեւ Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական մետաղյա առարկաների պահպանության եւ ուսումնասիրման նպատակով համագործակցության» փոխըմբռնման հուշագրի, որի շրջանակում արդեն իրականացվել է «Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական բրոնզե առարկաների վերականգնման» թեմայով 4 սեմինար եւ 3 միջազգային գիտաժողով: Սեմինարը շարունակվելու է մինչեւ փետրվարի 22-ը:

## «Լռություն. հայը եւ հայկականը Վրաստանում». ֆիլմի պրեմիերա




Երեւանում տեղի է ունեցել Հայկական ճարտարապետության ուսումնասիրող հիմնադրամի պատրաստած «Լռություն. հայը եւ հայկականը Վրաստանում» վավերագրական ֆիլմի պրեմիերան:

Ֆիլմը ներկայացնում է վերջին 80 տարվա ընթացքում վրացական պետության ցուցաբերած վերաբերմունքը երկրի ազգային փոքրամասնությունների նկատմամբ: Հայերն ու ադրբեջանցիները Վրաստանում գոյություն ունեցող համեմատաբար ամենամեծ ազգային փոքրամասնություններն են կազմում: 1920-ական թվականներից սկսած՝ վրացական իշխանությունները շարունակաբար ոչնչացրել են երկրի ոչ վրացական պատմամշակութային հուշարձանները: Այս քաղաքականությանը զոհ գնացած հուշարձանների թվում են շուրջ 300 հայ առաքելական, կաթողիկե եւ ուղղափառ եկեղեցիներ, ինչպես նաեւ վանքեր, գերեզմանոցներ եւ մզկիթներ: Զվիադ Գամսախուրդիայի նախագահության տարիներից ի վեր նմանօրինակ գործողություններն ուղեկցվել են մի քաղաքականությամբ, որով երկրի ոչ վրացի բնակիչներին պարտադրվում է ուրանալ իրենց պատմական ազգանունները եւ ընդունել վրացական ազգանուններ:

Ֆիլմի ռեժիսորն է Տիրան Կարապետյանը, երաժշտությունը՝ Այդին Դավուդիի:

«Լռություն. հայը եւ հայկականը Վրաստանում» վավերագրական ֆիլմը կարելի է դիտել հետեւյալ հասցեում.

http://www.youtube.com/watch?v=GVndLn5PoZY

## ՀՀ մշակույթի նախարարությունն ու ՎիվաՍել-ՄՏՍ-ն ներկայացրին համատեղ իրականացրած ծրագրերն ու առաջիկա անելիքները

ՀՀ մշակույթի նախարարությունում կազմակերպված մամլո ասուլիսում, նախարար Հասմիկ Պողոսյանը եւ ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը ներկայացրել են 2012-ին համատեղ իրականացրած եւ համագործակցության շրջանակներում 2013-ին նախատեսվող մշակութային ծրագրերը:




Մշակույթին աջակցությունը ՎիվաՍել-ՄՏՍ-ի կորպորատիվ պատասխանատվության մաս է կազմել ընկերության գործունեության առաջին իսկ օրվանից: Ընդհանուր առմամբ, ընկերությունը մշակութային նախագծերի իրականացման համար հատկացրել է շուրջ 6,5 միլիարդ դրամ, որից 952,8 միլիոնը՝ 2012թ.-ին: Իսկ 2013-ին ամենատարբեր ծրագրերի իրականացման համար հատկացվելու է 1,204 միլիարդ ՀՀ դրամ:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի համար առաջնային է ազգային ինքնության պահպանումը եւ զարգացումը: Ընկերությունը հաստատակամ է սերունդներին այդ տրամաբանությամբ առաջնորդելու՝ ամբողջ հայության կողմից Հայաստանը որպես տուն ընկալելու, հայրենիքի հանդեպ սերը պահպանելու եւ ներշնչանքի աղբյուր դարձնելու հարցում:

Ընկերության աջակցությունը մշակույթի ոլորտին չի սահմանափակվում ազգային մշակույթի առաջխաղացմանը նպաստելով: Ընկերությունը համոզված է, որ մշակույթն առավել հզոր եւ հարուստ է այլ մշակույթների հետ շփման արդյունքում: Ազգայինի առանձնահատկության պահպանումը, սակայն, կարեւոր է մեր ինքնության եւ դարերից եկող մշակութային գանձերը պահպանելու տեսանկյունից: Այս ոլորտին ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությունը նաեւ մշակութային երկխոսությանը նպաստելու եւ գալիք սերունդներին կրթելու նպատակ ունի: Ինքնատիպ եւ նշանակալի որեւէ մշակութային իրադարձություն նոր որակ է հաղորդում մեր հասարակության կյանքին:

ՎիվաՍել-ՄՏՍ-ի աջակցությամբ իրականացված ծրագրերն առանձնանում են ոլորտների եւ ոճերի բազմազանությամբ. աջակցություն Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտին՝ թանգարանային եւ ցուցադրական փաստաթղթերի ձեռքբերման հարցում, «Օպերացիա «Նեմեսիս» ներկայացման բեմադրման հովանավորություն եւ այլն:

Հատուկ ուշադրության կենտրոնում է դասական երաժշտությունը: Ընկերությունը ֆինանսական աջակցություն է ցուցաբերել Իտալիայի դեսպանատան նախաձեռնությամբ «I Solisti Veneti»-ի համերգի կազմակերպմանը, հովանավորել է «Ազգային պատկերասրահ» դասական երաժշտության, Գյումրիի «Վերածնունդ» եւ «Վերադարձի» երաժշտական փառատոները:

Աջակցություն է ցուցաբերվում Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբին, Հայաստանի երիտասարդական նվագախմբին, Կոմիտասի անվան լարային քառյակին, «Բարեկամություն» անսամբլին, Պետական ակադեմիական երգչախմբին, ինչպես նաեւ անհատ ստեղծագործողներին: ՎիվաՍել-ՄՏՍ-ն նաեւ հովանավորում է «Հանրային ռադիոյի ոսկե ֆոնդ» անթոլոգիայի ստեղծման աշխատանքները:

Որպես կորպորատիվ պատասխանատու քաղաքացի, ընկերությունը աջակցել է նաեւ կինոարվեստին՝ նպաստելով դրա պահպանմանն ու հայ հանդիսատեսին հասանելիությանը: Այս տարի տասնամյա գործունեությունը նշող «Ոսկե ծիրան» միջազգային կինոփառատոնը հիանալի հնարավորություն է՝ եւս մեկ անգամ Հայաստանը աշխարհին, իսկ աշխարհը՝ Հայաստանին ներկայացնելու համար: Ընկերությունն արդեն ութերորդ անգամ է ստանձնել փառատոնի հովանավորությունը:

«Երեւանը՝ գրքի համաշխարհային մայրաքաղաք» նախագծի շրջանակներում հովանավորվել է «Via Libri» ծրագիրը: Ընթերցանության տարածմանն ուղղված նախագծերի աջակցությունը նպատակ ունի, դպրոցներում ամրապնդելու ընթերցանության մշակույթը, նպաստելու մշակութային, սոցիալական եւ տնտեսական զարգացմանն առավել պատրաստ երիտասարդության ձեւավորմանը:

2013-ին մշակույթի նախարարությունը շարունակելու է հանդես գալ հետաքրքրական նախաձեռնություններով. բազմաթիվ են երաժշտական, թատերական նախագծերն ու երիտասարդության համար նախատեսված պրեմիերաները եւ փառատոները:

Ծրագրային նման բազմազանությունը կարող է կյանքի կոչվել միայն կորպորատիվ գործընկերների աջակցությամբ: Գործընկերներ, որոնց մղումն ազնիվ է. աջակցել ոչ միայն հայ ժողովրդի մշակութային ինքնության պահպանմանն ու զարգացմանը, այլեւ՝ Հայաստանում համաշխարհային հարուստ մշակութային ժառանգության ներկայացման գործին: Մշակույթի նախարարությունը գնահատում է աշխարհին հայկական մշակույթի ներկայացմանն ուղղված՝ Հայաստանում հեռահաղորդակցության առաջատար օպերատորի հետ երկարաժամկետ եւ կայացած համագործակցությունը:

Հասարակության պատմության հիմքում իր արվեստն ու մշակույթն են: Այս ճշմարտությունն ընդունելով՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ն ապացուցել է ժամանակակից հայ մշակույթի բարեկամ լինելու իր վճռականությունն ու աջակցել՝ իր բարձր դիրքերը պահպանելուն ուղղված՝ մշակույթի ոլորտի ջանքերը:

## Հայ պոեզիայի առաջին ժողովածուն՝ շվեդերենով

Հայ գրատպության 500-ամյակի շրջանակներում ՀԳՄ հրատարակչությունը 2012-ի վերջին լույս ընծայեց ժամանակակից հայ պոեզիայի ժողովածու՝ շվեդերենով: Ժողովածուն կրում է «Արարատի շուքի ներքո» խորհրդանշական խորագիրը եւ առաջին հրատարակությունն է շվեդերեն լեզվով. 1968-ին Ստոկհոլմում տպագրված հայ արձակի մի քանի նմուշների ժողովածուի թարգմանությունը կատարված էր միջնորդ լեզուներից: Հիշյալ բանաստեղծական ժողովածուն կազմել են բանասեր, թարգմանիչ Արծվի Բախչինյանը (Երեւան), բանաստեղծ Կարո Հակոբյանը (Շվեդիա) եւ շվեդ բանաստեղծ, թարգմանիչ Սթիգ Լյունդսթրյոմը: Գիրքը բացվում է ՀԳՄ նախագահ Լեւոն Անանյանի առաջաբանով, հաջորդում է Արծվի Բախչինյանի եւ Կարո Հակոբյանի հեղինակած ներածականը, ապա եւ հայ իրականության հետ իր առնչությունների մասին Սթիգ Լյունդսթրյոմի հոդվածը, ժամանակակից հայ բանաստեղծությանը վերաբերող գրականագետ Սուրեն Աբրահամյանի ուսումնասիրությունը ամբողջացնում են ժողովածուի նախաբանային-մեկնաբանողական մասը:




Ժողովածուում ներկայացված են Հայաստանի եւ Սփյուռքի ժամանակակից հայ 22 բանաստեղծների գործեր: Առաջին բաժնում՝ Պարույր Սեւակ, Համո Սահյան, Սիլվա Կապուտիկյան, Գեւորգ Էմին, Ռազմիկ Դավոյան, Հովհաննես Գրիգորյան, Հենրիկ Էդոյան, Արտեմ Հարությունյան, Յուրի Սահակյան, Դավիթ Հովհաննես, Վարդան Հակոբյան, Էդվարդ Միլիտոնյան, Հրաչյա Թամրազյան, Վիոլետ Գրիգորյան, Լիլիթ: Երկրորդ բաժնում՝ Լեւոն-Զավեն Սյուրմելյան, Զահրատ, Շառլ Ազնավուր, Դայանա Տեր-Հովհաննեսյան, Իգնա Սարըասլան, Կարո Հակոբյան եւ Հարութ Վարդանյան:

Թարգմանությունների մեծ մասն իրականացրել են Արծվի Բախչինյանը եւ Կարո Հակոբյանը, նաեւ՝ Նարինե Հակոբյանը, Աշխեն Բախչինյանը, Կարինե Օքերման Սարգսյանը, Լարս Սթրյոմբերգը եւ Սթիգ Լյունդսթրյոմը՝ որպես համաթարգմանիչ:

Ս. Բ.

# Բռնցքամարտիկները որոշեցին ուժեղագույններին

Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում վերջնագիծը հատեց բռնցքամարտի Հայաստանի առաջնությունը, որը նվիրված էր հանրապետությունում ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի կոմիտեի հիմնադրման 90-ամյակին: Քաշային 10 կարգերում հանրապետության չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին 88 բռնցքամարտիկներ: Մրցաշարին մասնակցեցին գրեթե բոլոր ուժեղագույնները: Բացակայում էին միայն 75 կգ քաշային Անդրանիկ Հակոբյանը եւ անցյալ տարվա դեկտեմբերին Կալինինգրադում կայացած մինչեւ 22 տարեկանների Եվրոպայի առաջնության մրցանակակիրներ Կորյուն Սողոմոնյանը, Արամ Ավագյանը եւ Նարեկ Աբգարյանը: Նրանց որոշվել էր հանգստանալու հնարավորություն ընձեռել: Բացի այդ էլ, այդ բռնցքամարտիկներն իրենց ելույթներով ապահովագրել են տեղը հավաքականում:



Չեմպիոնի տիտղոսի համար բավականին թեժ մենամարտեր ընթացան: Մինչեւ 49 կգ քաշային կարգում հաղթեց մեր փորձառու բռնցքամարտիկներից մեկը՝ Եվրոպայի նախկին չեմպիոն Հովհաննես Դանիելյանը: «Դինամո» ընկերության ներկայացուցիչը հաղթեց իր բոլոր մրցակիցներին ու կանգնեց պատվո պատվանդանի վերին աստիճանին: Մինչեւ 52 կգ քաշային կարգում էլ իր հավասարը չուներ Դերենիկ Գիժլարյանը, որը եւս լավ ծանոթ է մարզասերներին: Իսկ ահա մինչեւ 56 կգ քաշայինների մրցավեճում առաջնության հայտնությունը դարձավ վանաձորցի Արարատ Մխիթարյանը, որը լավ տպավորություն թողեց մասնագետների վրա:

Քաշային մյուս կարգերում հանրապետության չեմպիոնի տիտղոսին արժանացան Հովհաննես Բաչկովը (60 կգ), Արա Պուլուզյանը (64 կգ), Վլադիմիր Մարգարյանը (69 կգ), Արման Հովնիկյանը (75 կգ), Ռուսլան Իբրահիմյանը (81 կգ), Ազատ Դավթյանը (91 կգ) եւ գերծանրքաշային Արմեն Սիմոնյանը:

Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Կարեն Աղամալյանը միջինից մի քիչ բարձր գնահատեց մրցաշարում բռնցքամարտիկների ցույց տված արդյունքները: Դա բավարար է՝ հաշվի առնելով այն փաստը, որ մրցաշրջանը դեռեւս նոր է սկսվում ու բռնցքամարտիկները 100 տոկոսով պատրաստ չեն:

Բռնցքամարտի Հայաստանի հավաքականը փետրվարի 25-ից մարտի 10-ը Աբովյանում ուսումնամարզական հավաք կանցկացնի: Դրանից հետո հավաքականի անդամները կբաժանվեն 3 խմբի: Առաջին խումբը կմեկնի Չեխիա, 2-րդը՝ Ուկրաինա, 3-րդը՝ Ղազախստան, որտեղ կմասնակցեն միջազգային մրցաշարերի: 3 մրցաշարերում բռնցքամարտիկների ցույց տված արդյունքներով կկազմավորվի հավաքականը: Հետագայում եւս հավաքականի անդամները կբաժանվեն 2 մասի: Մի մասը մայիսին ուսումնամարզական հավաք կանցկացնի Ծաղկաձորում, մյուս մասը մարզումները կշարունակի Բելառուսում՝ նախապատրաստվելով մայիսի 31-ից հունիսի 10-ը Մինսկում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

# «Շախտյորին» լուրջ փորձություն է սպասում

Այսօր Երեւանի ժամանակով ժամը 22:45-ին Դոնեցկի «Դոնբաս Արենա» մարզադաշտում կտրվի չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի «Շախտյոր»-«Բորուսիա» հանդիպման մեկնարկը: Հանձինս Դորտմունդի «Բորուսիայի» «Շախտյորին» կդիմակայի ֆուտբոլային ուժեղ կոլեկտիվ, որը չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարում D խմբում հաղթող էր ճանաչվել՝ չկրելով ոչ մի պարտություն: Ինչ խոսք, «Շախտյորին» այսօր լուրջ քննություն է սպասում: Թիմը 2-րդ անգամ է պայքարում չեմպիոնների լիգայի քառորդ եզրափակիչի ուղեգրի համար: Ուկրաինական ակումբի առաջին փորձը հաջող էր: Հաղթահարելով իտալական «Ռոմայի» դիմադրությունը, «Շախտյորը» մտավ քառորդ եզրափակիչ: «Բորուսիան» վերջին անգամ 1/4 եզրափակիչում հանդես է եկել 1998-ին:



«Շախտյորն» ու «Բորուսիան» չեմպիոնների լիգայի մրցաշարում մրցել են 2001-ին որակավորման 3-րդ փուլում: Դոնեցկում գերմանական ակումբը հաղթել է 2-0 հաշվով, սեփական հարկի տակ կրկին մրցակցին պարտության է մատնել 2 գնդակի տարբերությամբ (3-1): Վերջին անգամ «Շախտյորը» եվրոգավաթներում գերմանական թիմերի հետ մրցավեճի է բռնվել 2009-ի մայիսի 20-ին Ստամբուլում կայացած ՈւԵՖԱ-ի գավաթի եզրափակիչում: Այդ օրը «Շախտյորը» լրացուցիչ ժամանակում 2-1 հաշվով հաղթեց Բրեմենի «Վերդերին» ու իր առաջին տիտղոսը նվաճեց եվրոգավաթներում:

Հանդիպման նախօրեին կայացել է «Շախտյորի» գլխավոր մարզիչ Միրչա Լուչեսկուի մամուլի ասուլիսը: Նա նշել է, որ ամեն անգամ գարնանը պաշտոնական խաղ անցկացնելիս մրցակիցը նախապատրաստության մակարդակով, խաղային պրակտիկայի առկայությամբ առավելություն է ունեցել «Շախտյորի» նկատմամբ: Ուստի թիմի նախապատրաստական աշխատանքներն այս տարի այնպես են տարվել, որպեսզի այդ տարբերությունը չզգացվի: Եվ դատելով Արաբական Միացյալ Էմիրություններում եւ Իսպանիայում անցկացված ուսումնամարզական հավաքների արդյունքներից, Միրչա Լուչեսկուն գոհ է մնացել ֆուտբոլիստներից:

«Կարո՞ղ ենք հաղթել այնպիսի մի թիմի, ինչպիսին «Բորուսիան» է: Խաղը ցույց կտա, թե որքանով ենք պատրաստ դրան: Թեեւ գերմանական ակումբների հետ մշտապես հաջող ենք խաղացել՝ հաղթելով «Շալկե-04»-ին, «Շտուտգարտին» ու «Վերդերին»: Սակայն «Բորուսիան» իր խաղաոճով ավելի մոտ է լատինամերիկյան ֆուտբոլին: «Բորուսիան» շատ բարձրակարգ ու լավ կազմակերպված թիմ է, որում հանդես են գալիս վարպետ ֆուտբոլիստներ: Կարծում եմ, որ մրցակցության ելքը կորոշվի Դորտմունդում կայանալիք պատասխան խաղում: Մենք եվրոգավաթների մասնակցության զգալի փորձ ունենք եւ կարող ենք հաղթահարել հերթական արգելքը: Կարող եմ ասել, որ ներկայիս «Շախտյորն» ավելի ուժեղ է այն «Շախտյորից», որը խաղացել էր «Բարսելոնի» հետ: Իսկ վերջինս էլ ուժեղ է ներկայիս «Բորուսիայից»: Ամեն ինչ կվճռի ֆուտբոլիստների տրամադրվածությունն ու վարպետությունը», նշել է Միրչա Լուչեսկուն:



# Հրայր Մկոյանը հանդես կգա չեխական «Դինամոյում»

**Ֆուտբոլի Հայաստանի հավաքականի պաշտպան Հրայր Մկոյանը հաջող փորձաշրջան անցնելով Չեխիայի Չեսկե Բուդեյովիցե քաղաքի «Դինամոյում», մինչեւ հաջորդ մրցաշրջանի ավարտը պայմանագիր է կնքել ակումբի հետ:**

**26-ամյա Մկոյանն ընդամենը մի քանի օր էր մարզվել չեխական թիմի կազմում՝ մասնակցելով ավստրիական «Ռապիդի» հետ հանդիպմանը, որում «Դինամոն» պարտվել էր 0-1 հաշվով: Չնայած կարճ ժամանակաշրջանին, թիմի գլխավոր մարզիչ Միրոսլավ Ստուկուպը գոհ է մնացել հայ ֆուտբոլիստի գործողություններից: Ըստ մարզչի, Մկոյանն ունակ է ուժեղացնելու թիմի պաշտպանությունը: Ներկայումս «Դինամոն» Չեխիայի առաջնությունում ընթանում է նախավերջին՝ 15-րդ տեղում եւ պայքարում է ուժեղագույնների խմբում տեղը պահպանելու համար:**

**Ինչ վերաբերում է Հրայր Մկոյանին, ապա վերջին մեկ տարում նրան չէր հաջողվում ամրապնդվել արտերկրի որեւէ ակումբում: Անցած տարվա սկզբին նա 6 ամսով պայմանագիր էր կնքել Նալչիկի «Սպարտակի» հետ, սակայն թիմը դուրս մնաց ՌԴ պրեմիեր լիգայից ու Մկոյանը վերադարձավ Հայաստան՝ ընդգրկվելով «Շիրակի» կազմում, որտեղ էլ սկսել էր ֆուտբոլիստի կարիերան: Հունվարին նա փորձաշրջան անցավ Լվովի «Կարպատներում», սակայն ֆինանսական հարցի շուրջը համաձայնության չեկավ ակումբի ղեկավարության հետ: Հուսանք, որ Չեխիայի «Դինամոյում» Մկոյանն իր հաստատուն տեղը կունենա հիմնական կազմում:**

# Վլադիմիր Ենգիբարյանի դին կտեղափոխվի հայրենիք

**Լեգենդար բռնցքամարտիկ, օլիմպիական չեմպիոն Վլադիմիր Ենգիբարյանի դին կտեղափոխվի հայրենիք եւ նա իր վերջին հանգրվանը կգտնի հայրենի հողում:**

**Այս որոշումը կայացվել է մարզաշխարհի ղեկավարության եւ Վլ. Ենգիբարյանի հարազատների կողմից: Լեգենդար բռնցքամարտիկը վերջին տարիներին բնակվում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ էլ 81 տարեկան հասակում կնքել է իր մահկանացուն:**

**Վլ. Ենգիբարյանը եղել է Երեւանի պատանի բռնցքամարտիկների դպրոցի հիմնադիր-տնօրենը, որը հետագայում անվանակոչվել է նրա անունով: Բռնցքամարտիկների մի քանի սերունդներ են ոգեշնչվել նրա հաջողություններով, կրթվել եւ դաստիարակվել մեծ մարզիկի պատգամներով: Նա արժանացել է բազմաթիվ պետական, կառավարական պարգեւների, ձեռք բերել մարզական բարձրագույն տիտղոսը՝ դառնալով օլիմպիական չեմպիոն: Չնայած նա կյանքի վերջին տարիներին հայրենիքում չէր բնակվում, սակայն մշտապես սերտ կապի մեջ է եղել հայրենիքի եւ հատկապես հայաստանյան մարզաշխարհի հետ:**

**Վլ. Ենգիբարյանի հոգեհանգիստը տեղի կունենա փետրվարի 15-ին ժամը 18:00-ին Կոնդի Սուրբ Հովհաննես եկեղեցում, հուղարկավորության արարողությունը կսկսվի փետրվարի 16-ին ժամը 14:00-ին նույն տեղում, աճյունը հողին կհանձնվի Երեւանի քաղաքային պանթեոնում:**

# «Միկան» մարզումները կշարունակի Կիպրոսում

**Ֆուտբոլի Հայաստանի առաջնության առաջատարներից մեկը՝ «Միկան» երեկ ուսումնամարզական հավաքի մեկնեց Կիպրոս: Մինչ այդ «Միկան» երկկողմանի խաղ անցկացրեց: Խաղն ավարտվեց առաջին թիմի հաղթանակով՝ 7-5: Առաջին թիմի կազմում արդյունավետ խաղով աչքի ընկավ «Միկայի» ռմբարկու Սեմյոն Մուրադյանը՝ խփելով 4 գոլ: 2 գոլի հեղինակ դարձավ Վլադիմիր Ուլիխանյանը, մեկ գնդակ էլ խփեց Վարդան Մովսիսյանը: 2-րդ թիմից մեկական գոլ խփեցին Հենրիկ Հարությունյանը, Սարգիս Շահինյանը, Արեգ Ազատյանը, Ռաֆայել Ղազարյանն ու Գոռ Պողոսյանը:**

**Կիպրոսում «Միկան» նախատեսել է ստուգողական 4 հանդիպում անցկացնել: Փետրվարի 14-ին «Միկան» կմրցի Լեհաստանի 2-րդ խմբում հանդես եկող «Բիտովիայի» հետ: 4 օր անց միկացիներն ուժերը կչափեն ՌԴ առաջնության առաջին խմբի մասնակից «Ուֆայի» հետ: Փետրվարի 21-ին թիմը կմրցի ՌԴ 2-րդ խմբի առաջնության առաջատար Օրենբուրգի «Գազովիկի» հետ: Ստուգողական վերջին հանդիպումը «Միկան» կանցկացնի սերբական «Չուկարիչկի» թիմի հետ: Այդ խաղը կկայանա փետրվարի 24-ին:**

# Ռոնալդուն կձգտի գերազանցել Ռաուլի ռեկորդը

**Մադրիդի «Ռեալի» պաշտոնական կայքը թիմի պորտուգալացի կիսապաշտպան Քրիշտիանու Ռոնալդուին դասել է ակումբի լեգենդների շարքը: Նրա լուսանկարը տեղադրվել է արքայական ակումբի լեգենդներ Խենտոյի, Պիրիի, Դի Ստեֆանոյի, Բուտրագենյոյի եւ Ամանսիոյի լուսանկարների կողքին: Ֆոտոսեսիան նվիրվել է Ռոնալդուի հերթական նվաճմանը:**




**Պորտուգալացի ֆուտբոլիստը «Ռեալում» անցկացրած 179 խաղում 182 գոլ է խփել: Նա միջին արդյունավետությամբ գերազանցում է բոլորին: Իսկ խփած գոլերի քանակով Ռոնալդուն թիմի ռմբարկուների ցանկում ներկայումս 6-րդ տեղում է:**

**«Ռեալի» ռմբարկուների ցուցակը գլխավորում է երկար տարիներ թիմի ավագի թեւկապը կրած եւ ակումբի յուրօրինակ խորհրդանիշը դարձած Ռաուլը, որը 741 խաղում 323 գոլի հեղինակ է դարձել: 2-րդ տեղում թիմի մեկ այլ լեգենդար ֆուտբոլիստ Ալֆրեդո դի Ստեֆանոն է, որը 396 խաղում 308 գոլ է խփել: Այնուհետեւ գալիս են Սանտիլյանան՝ 290 գոլ (463 խաղում), Ֆերենց Պուշկաշը՝ 242 (261) եւ Ուգո Սանչեսը՝ 208 (283):**

**Քրիշտիանու Ռոնալդուն հայտարարել է, որ ցանկանում է գերազանցել Ռաուլի արդյունավետության ռեկորդը. «Ես միշտ ասել եմ, որ կան ռեկորդներ, որոնք պետք է գերազանցեն նոր սերնդի ֆուտբոլիստները: Ռաուլի ռեկորդը դրանց թվում է: Ուրախ եմ «Ռեալի» պատմության մի մասնիկը լինելու: Ներկայումս թիմի լավագույն ռմբարկուների ցանկում 6-րդն եմ: Հույս ունեմ, որ մի օր կդառնամ առաջինը»:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

